

ԳԱՅԱՆԵ ԶԱԿՈՒՅԱՆ

# ԿԱԽ

*ն՛վ է վախը*

ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈՒՅԱՆ

**ԿԱՆՍ**

*ն° 1 է վախճ*

Երևան  
«Բուքարթ» ՍՊԸ  
2016

ՀՏԴ 159.9

ԳՄԴ 88

Հ 177

Հակոբյան Գայանե  
Հ 177 Վախ / Գ. Հակոբյան.- Եր.: «Բուքարթ»  
ՍՊԸ, 2016.- 136 էջ:

Բոլոր իրավունքները պահպանված են:

ՀՏԴ 159.9

ԳՄԴ 88

## Բովանդակություն

Նախաբան .....	5
Հոգեբանություն, վախ, ֆորբիա .....	7
Ինչ է կամ ո՞վ է վախը.....	15
Որտեղ է ծնվում վախը և ինչպե՞ս է զարգանում .....	17
Ինչպե՞ս ազատվել վախից.....	35
Ինչ է սպասվում այն մարդուն, ով չի կարողանում հաղթել վախը .....	64
Ինչպիսի՞ վարքագիծ կարելի է դրսևորել ամենատարբեր վախերից ազատվելու համար.....	66
Ինչ է նշանակում վախ՝ Աստծուց .....	76
Ինչ է պատահում այն մարդուն, ով Աստծուց երկյուղ ունի և վախի հոգուն ասում է՝ ո՛չ .....	85

## Ն Ա Ն Ա Բ Ա Ն

Վախ թեմային անդրադառնալիս անհրաժեշտ համարեցի հետաքրքրվել և իմանալ, թե ժամանակակից բժշկությունն ինչպիսի բացատրություն է տալիս այդ երևույթին: Զրուցելով բժիշկների ու հոգեբանների հետ, ծանոթանալով վախի թեմային վերաբերող ուսումնասիրություններին՝ եկա այն եզրակացության, որ բժշկությունն ու հոգեբանությունը, լինելով անհրաժեշտ և օգտակար մարդկությանը, հարգանքի արժանի շատերիս կողմից, չեն կարող վերջնական պատասխան տալ, թե ինչ է վախը, ինչպես է ծնվում և ինչ պայմաններում է զարգանում: Ուսումնասիրեցի Աստվածաշունչը՝ համոզված լինելով, որ այնտեղ կգտնեմ հարցերիս պատասխանները: Հայտնի քարոզիչներից մեկն ասել է, որ ինչպես կա երթևեկության կանոնների գիրք՝ վարորդներին ուղղորդելու համար, այնպես էլ կա մի գիրք, որը մարդուն սովորեցնում է՝ ինչպես ապրել՝ փորձության մեջ չընկնելու հա-

մար, և եթե ընկել է՝ ինչպես դուրս գալ փորձությունից: Այդ գիրքն Աստվածաշունչն է: Մ. Պոզոգլյանի «Սուրբ Գրքի բառային ներշնչումը գիտականորեն ապացուցված» աշխատությունն ապացույցներից մեկն է, որ տիեզերքն ու մարդ արարածին ստեղծողը և Աստվածաշունչը գրողը մեկն է՝ միակ Աստված, ով Սուրբ Երրորդություն է՝ Հայր Աստված, Որդի Աստված, Սուրբ Հոգի Աստված (գիրքը՝ հայերեն թարգմանությամբ կարող եք կարդալ իմ բլոգում՝ [gayanehakobyan.org](http://gayanehakobyan.org), 18 նոյեմբեր, 2015թ.): Քանի որ Աստված է ստեղծել մարդուն, բնականաբար, Նա կարող է հստակ ասել, թե ինչ է վախը և ինչ պայմաններում է ծնվում ու զարգանում, որովհետև Նա հետաքրքրված է մարդուն երջանկացնող ու անհանգստացնող յուրաքանչյուր երևույթով: Ես ակնկալում էի, որ Աստվածաշնչում ոչ միայն կգտնեմ ինձ ու բազում մարդկանց հետաքրքրող վերոհիշյալ հարցերի պատասխանները, այլև կհայտնաբերեմ վախից ազատվելու ճանապարհը:

Այսպիսով, այս գրքում ներկայացնում եմ վախ երևույթը, նրա ծնունդը, զարգացման պատճառը և նրանից ազատվելու ճանապարհը՝ համաձայն Աստվածաշնչի:

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՎԱՆ, ՖՈՐԻԱ

*Ավետարանը հեղաշրջում, նորոգում  
ու պերճանք չի բերում.  
Ավետարանը ազատագրում է բերում:*

*Ռ. Բոնկե*

Համաձայն բացատրական բառարանների՝ վախն իրական կամ մտացածին զգացողություն է, որն ստեղծում է անապահովության և մերժվածության զգացում:

Հոգեբանների և հոգեբույժների տեսակետից՝ վախը պաշտպանական հակազդեցությունն է իրական կամ թվացյալ վտանգի հանդեպ: Այն ծնում է մի վարք, որն ուղղված է վտանգի չեզոքացմանը: Վախի հակվածությունը կախված է սեռից, տարիքից, անձնային առանձնահատկություններից, անձի սոցիալական ուղղվածությունից:

Ըստ դրսևորումների ծագումնաբանության՝ հայտնի են վախի հետևյալ տեսակները.

- վիտալ վախ՝ վախը ծագում է մարդու ներսից,

- իրական կամ ռեալ վախ՝ վտանգը սպառնում է շրջապատից,
- բարոյական կամ խղճի վախ՝ վախը ծագում է անձի մղումների կամ արժեքների վերագնահատման կամ քայքայման հետևանքով:

Վախ երևույթը և՛ հոգեբանների, և՛ հոգեբույժների ուշադրության կենտրոնում է՝ կախված նրա զարգացման մակարդակից: Կան վախեր և ֆոբիաներ: Վախն ունի ընդհանրական իմաստ, իսկ ֆոբիան՝ վախ է կոնկրետ մեկ իրավիճակից կամ առարկայից: Փակ տարածքում գտնվելու վախը կոչվում է կլաուստրոֆոբիա: Վախը սուր առարկաների նկատմամբ կոչվում է օբսիֆոբիա: Կա բարձրությունից վախ, որը կոչվում է գիպսոֆոբիա: Ժամանակակից բժշկության մեջ ֆոբիաների թիվը հինգ հարյուրից ավելի է:

Ֆոբիաներով ու վախերով տառապել են նաև այնպիսի աշխարհահռչակ մարդիկ, ովքեր մարդկության պատմության մեջ տպավորվել են որպես ուժեղագույններ, համարձակներ, ինքնիշխաններ... Նապոլեոն Բոնապարտը վախեցել է սպիտակ ձիուց, թեպետ որոշ նկարիչներ նրան կտավի վրա



պատկերել են հենց սպիտակ ձիու վրա: Ռուսաստանի Պետրոս Առաջին կայսրը տառապում էր ընդարձակ տարածքի նկատմամբ ունեցած ֆոբիայից: Նա գերադասում էր ցածր առաստաղով, համեմատաբար փոքր սենյակները: Իոսիֆ Ստալինը տառապում էր տոկսիկոֆոբիայից՝ թունավորումից: Բացի դրանից, ունենալով գեներալիսիմուսի աստիճան, նա երբեք պատերազմի դաշտում չէր եղել և ինքնաթիռ չէր նստել՝ դարձյալ ֆոբիաների պատճառով:

Մարդիկ հարցնում են՝ վախերով ու ֆոբիաներով տառապելու դեպքում ո՞ւմ դիմենք՝ «մոմ թափողներին», պայծառատեսներին, հոգեբաններին, հոգեբույժներին: Նույնիսկ կան մարդիկ, ովքեր ոգևորված պատմում են, թե այս կամ այն «մոմ թափողը» ինչպես է օգնել իր երեխային...

Ոչ մի «մոմ թափող» ու «պայծառատես» չի կարող վախի ճիրաններից ազատել մարդուն: Չեմ ժխտում, հնարավոր է, որ լինեն դեպքեր, բայց դա ոչ թե «մոմ թափողի» անմիտ գործողությունների արդյունքն է, այլ տվյալ մարդու ջերմեռանդ հավատքը: Ժողովուրդն ասում է. «Հավատքով չոր քարին էլ գնաս՝ կծաղկի»: Աստվածաշնչի հա-

մաճայն՝ հավատքը ծովեր է կիսում. «Եվ Մովսեսը մեկնեց իր ձեռքը ծովի վրա: Եվ Եհովան սաստիկ արևելյան հովով քշեց ծովն ամբողջ գիշերվա ընթացքում և ծովը ցամաքեցրեց, և ջրերը ճեղքվեցին: Եվ Իսրայելի որդիները ծովի միջով՝ ցամաքով գնացին, և ջրերը նրանց աջ ու ձախ կողմից պարիսպ եղան» (Ելից 14.21,22), «Եվ հենց տապանակը վերցնող քահանաները Հորդանանին հասան, և նրանց ոտքերը ջրի եզերքին մեխվեցին (որովհետև հունձքի ժամանակ Հորդանանը մինչև իր եզերքը լիքն է լինում), այդ ժամանակ վերևից իջնող ջրերը կանգնեցին և Սարթանի մոտ գտնվող Ադամ քաղաքից հեռու մի կարկառակույտի նման բարձրացան, և դաշտի ծովը, այսինքն՝ Ադի ծովը իջնող ջրերը վերջացան, կտրվեցին, և ժողովուրդն անցավ ու կանգնեց Երիքովի դիմաց: Եվ Տիրոջ Ուխտի տապանակը վերցնող քահանաները Հորդանանի մեջ՝ ցամաքի վրա հաստատ կանգնեցին, և ամբողջ Իսրայելը ցամաքով անցավ՝ մինչև բոլոր ժողովրդի Հորդանանով անցնելն ավարտվեց» (Հեսու 3.15-17): Ճշմարիտ հավատքն ամբողջներ է քանդում. «Եվ ժողովուրդն

աղաղակեց փողերը հնչելիս, և երբ ժողովուրդը փողերի ձայնը լսեց, բարձրաձայն աղաղակեց, պարիսպները վայր ընկան...» (Հեսու 6.20): Հավատքը հզոր զենք է:

Ինչ վերաբերում է «դիմել հոգեբույժներին» հարցին, միանշանակ կարող եմ ասել՝ այո: Աստվածաշունչը չի մերժում բժշկությունը, քանի որ Աստված է մարդուն գիտություն տվել՝ այդ հզոր միջոցն ստեղծելու, մարդու կյանքը փրկելու և նրան տանջանքներից ազատելու համար: Սակայն հանդիպում են հիվանդություններ, որոնց դեպքում բժշկությունն, իր զարգացման ամենաբարձր մակարդակով հանդերձ, անզոր է, իսկ Աստված գորավոր է՝ բուժելու ցանկացած հիվանդություն:

Սուրբ Գրքում կան դեպքեր, երբ մարդիկ դիմում են բժիշկներին և բուսական դեղամիջոցներին: Օրինակ՝ Եսայի մարգարեն, առաջնորդվելով Տիրոջ Հոգով, ցույց է տալիս Եզեկիա թագավորի բուժման ճանապարհը. **«Եվ Եսային ասաց. «Չորացրած թուզ առեք»: Եվ առան ու դրին վերքի վրա, ու նա առողջացավ»** (Դ Թագ. 20.7): Կա մեկ այլ օրինակ՝ Ասա թագավորի օրինակը: Ինչո՞ւ

մահացավ Ասա թագավորը, բժիշկներն ինչո՞ւ անկարող եղան՝ փրկելու նրա կյանքը: Ասա թագավորն իր թագավորության առաջին շրջանում նախանձախնդիր էր՝ Տիրոջ կամքն ամբողջությամբ կատարելու. **«Եվ Ասան բարություն և ուղղություն արեց իր Տեր Աստծո առջև՝ վերցրեց օտար սեղանները և բարձրավանդակները, կոտրեց արձանները և Աստարովթները ու հրամայեց Հուդային, որ իրենց հայրերի Տեր Աստծուն խնդրեն, օրենքն ու պատվիրանները կատարեն»** (Բ Մնաց. 14.2-5): Քանի դեռ Ասան քայլում էր Տիրոջ ճանապարհներով և Տիրոջ երկյուղով, հաղթում էր Իսրայելի բոլոր թշնամիներին. **«Եվ Ասան ու նրա հետ եղող ժողովուրդը հալածեցին նրանց մինչև Գերարա, և եթովպացիներն ընկան, նրանցից կենդանի մնացող չեղավ, որովհետև Տիրոջ առջև ու Նրա բանակի առջև ջարդվեցին ու շատ մեծ ավար առան: Եվ նա զարկեց Գերարայի շրջակա քաղաքները, որովհետև Տիրոջ վախը նրանց վրա էր, և բոլոր քաղաքները կողոպտեցին....»** (Բ Մնաց. 14.13,14): Սակայն հետագայում Ասան ապավինեց իր փորձառությանը ու միմիայն իր խելքին: Թագավո-

րության վերջին շրջանում Ասայի սիրտն այնքան էր հեռացել Աստծուց, որ նա իր հիվանդության ժամանակ էլ ոչ մի անգամ չդիմեց Նրան, այլ ամբողջությամբ ապավինեց բժիշկներին. **«Եվ Ասան իր թագավորության երեսունիններորդ տարում հիվանդացավ իր ոտքերով, բայց իր հիվանդությունում էլ չխնդրեց Տիրոջը, այլ բժիշկներին դիմեց: Եվ Ասան.... մեռավ իր թագավորության քառասունմեկերորդ տարում»** (Բ Մնաց. 16.12,13): Բժշկությունը որքան էլ հզոր առաջխաղացումներ ունենա, միևնույն է, հզորների Հզորը Աստված է:

Վախի պատճառով մարդու վիճակը կարող է այնքան բարդանալ, որ նա չընկալի Աստծո Խոսքը: Աղոթքի և հոգեբույժի օգնությամբ հնարավոր է մարդուն հասցնել գիտակցական մակարդակի, որպեսզի նա ընկալի Աստծո Խոսքը և հասկանա, թե Աստվածաշունչն ինչ է ասում իր կյանքի տվյալ իրավիճակի մասին: Իսելացի հոգեբույժն առաջարկում է բուժման ամբողջական ընթացք, որը չի կարելի անտեսել:

Մարդիկ նաև հարցնում են. «Դիմել հոգեբաններին»: Հոգեբանությունը գիտություն է մարդու, նրա հոգեկան աշխարհի, գիտակցության,

վարքի ու գործունեության մասին: Ես հարգում  
և օգտվում եմ հոգեբանությունից այնքանով, որ-  
քանով այդ գիտությունը չի հակասում Աստվա-  
ծաշնչին: Կան հոգեբաններ, ովքեր պնդում են.  
«Եթե մեկը քեզ վիրավորել է, խորը ցավ պատ-  
ճառել, և դու անկարող ես նրան պատասխա-  
նելու՝ ելնելով ամենատարբեր պատճառներից,  
կարող ես վերցնել մի իր, մահակով հարձակվել  
այդ իրի վրա ու ծեծել այնքան, մինչև զայրույթո  
անցնի»: Զայրույթը, հնարավոր է, այդ պահին  
անցնի, բայց վիրավորանքն ու ցավը չեն անցնի:  
Երբեմն ասում են. «Ժամանակը կբուժի»: Ժամա-  
նակն ավելի է խորացնում վերքը, և ատելությունն  
սպանում է արդեն ոչ թե վիրավորողին ու ցավ  
տվողին, այլ վիրավորանքն ու ցավն ընդունողին:  
Վիրավորանքին ու ցավին բալասան է պետք: Այդ  
բալասանը Աստծո ԻՍՈՍՔՆ է: Հոգեբանության  
մեջ կան իմաստուն խորհուրդներ, որոնք գրված  
են եղել Աստծո Խոսքում շատ ավելի վաղ ժամա-  
նակներում՝ մինչև հոգեբանությունը որպես գի-  
տություն ձևավորվելը:

## Ի՞նչ է ԿԱՄ Ո՞վ է ՎԱԽԸ

**Ա**նդրադառնալով վախ երևույթի և նրանից ձերբազատվելու թեմային, ինչպես նշել էի գրքիս Նախաբանում, ես հիմք եմ ընդունել Աստվածաշունչը, քանի որ միայն մարդ արարածին ստեղծող Աստված կարող է ամբողջությամբ պատասխան տալ մարդու կյանքում ավերիչ գործունեություն ծավալող այդ երևույթի վերաբերյալ:

Մարդիկ հաճախ սխալ են հարցադրում անում, երբ հետաքրքրվում են՝ ինչ է վախը, փոխարենը հարցնելու՝ ո՞վ է վախը: Հարցադրումը սխալ է, քանի որ չեն պատկերացնում, որ վախը հոգի է. նա ունի լսողություն, տեսողություն, խոսելու, ծիծաղելու, արհամարհելու, հրահրելու և այլ ընդունակություններ: Վախը հոգի է, քանի որ այդպես է ասում Աստվածաշունչը, և կյանքը դա ապացուցում է: **«Աստված չավեց մեզ վախի հոգի, այլ՝ զորության, սիրո և զգոնության»** (Բ Տիմոթ. 1.7):

Վախը հոգի է, անձ, որը չունի մարմին: Նա կարող է մշտապես ուղեկցել մարդուն՝ մնալով անտեսանելի: Վախը խոսում է մարդու հետ անձայն՝ տալով կաթվածահար անող, դեպի ճահիճ քաշող, մեկուսացնող, առաջընթացից արմատապես կտրող մտքեր: Նա այդ ամենն անում է անտեսանելի, սակայն նրա գործողությունների հետևանքները տեսանելի են: Յուրաքանչյուրը հնարավորություն ունի քննելու իր կյանքը և տեսնելու, թե «վախ» կոչվածը ինչ չափի վնաս է հասցրել իրեն:



## ՈՐՏԵՂ Է ԾՆԿՈՒՄ ՎԱՆԸ ԵՎ ԻՆՉՊԵՍ Է ԶԱՐԳԱՆՈՒՄ

Վախը ծնվում է այնտեղ, որտեղ չկա հավատք կամ վստահություն առ Աստված: Այն աճում ու զարգանում է այնտեղ, որտեղ չկա Աստծո հետ մշտական հաղորդակցություն: Աստծո Խոսքն ասում է. **«Տերն է իմ Հովիվը, ես ոչ մի բանի կարոտություն չեմ ունենա: Նա կանաչ վայրերում հանգստացնում է ինձ ու հանդարտ ջրերի մոտ է տանում ինձ: Իմ անձին հանգիստ է տալիս, ինձ առաջնորդում է արդարության շավիղներում՝ Իր անվան համար: Թեև անցնեմ մահվան շուքի ճորով, չար բանից չեմ վախենա, որովհետև Դու ինձ հետ ես, Քո զավազանն ու ցուպը մխիթարում են ինձ: Դու իմ առջև սեղան ես պատրաստում թշնամիներիս դիմաց և գլուխս օծում ես յուղով. իմ բաժակը խիստ լիքն է: Բարիք ու ողորմություն կգան իմ ետևից իմ կյանքի բոլոր**

**օրերում, և Տիրոջ տանը կրնակվեմ շատ երկար ժամանակ»** (Սաղմ. 23):

Համաձայն Խոսքի՝ եթե մարդը տիեզերքն ստեղծող Աստծուն ընտրում է որպես իր կյանքի Հովիվ (ով իրեն կերակրում է, ապահովում ամեն ինչով, պահպանում վտանգից, փրկում նույնիսկ մահից, իր համար սեղան պատրաստում իր թշնամիների աչքի առջև, ոչ թե իր թշնամիների ձեռքը մատնում իրեն), «ոչ մի բանի կարոտություն» չի ունենա, մշտապես հանգիստ ու հանդարտ կյանք կվայելի:

Մարդն ապրում է այս աշխարհում, որի իշխանը սատանան է: Հիսուսն ասաց. **«... այս աշխարհի իշխանը գալիս է և ոչինչ չունի Ինձանում»** (Հովհ. 14.30): Սատանան դարձավ այս երկրի իշխանը մարդու՝ Ադամի ու Եվայի անհնազանդության պատճառով, ովքեր ճաշակեցին Աստծուց արգելված պտուղը: Սակայն Տերը, երկիր ուղարկելով Իր միաձին Որդուն, հաշտություն կնքեց մարդու հետ: **«Հիրավի Նա մեր ցավերը վերցրեց և մեր վշտերը բեռնեց Իր վրա... Նա մեր մեղքերի համար վիրավորվեց և մեր անօրենությունների հա-**

մար հարվածվեց, մեր խաղաղության պատիժը Նրա վրա եղավ, ու Նրա վերքերով մենք բժշկվեցինք» (Եսայի 53.4,5), «Որովհետև գիտեք մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքը, որ ձեզ համար աղքատացավ Նա, որ հարուստ էր, որ դուք Նրա աղքատությունով հարստանաք» (Բ Կորնթ. 8.9): Աստվածաշնչի այս խոսքերը փաստում են, որ մեր երկնային Հայրը Հիսուս Քրիստոսի Գողգոթյան խաչի և թափված արյան միջոցով մարդուն ետ է գնել այս աշխարհի իշխանից՝ սատանայից: Սակայն սատանայի իշխանությունից ազատվում է այն մարդը, ով Աստծո Որդուն ընդունում է որպես իր կյանքի միակ Փրկիչ, Հովիվ: Սա չի նշանակում, որ այդ մարդուն սատանան չի հետապնդում՝ նրա դեմ հանելով թշնամիների, նրան բերելով մահաբեր հիվանդություններ, աղքատություն ու «կարոտություն»: Սատանան ջանք չի խնայում՝ ոչնչացնելու Աստծո կերպարանքով ու նմանությամբ ստեղծված մարդուն: Մինչդեռ նա ոչինչ չի կարող անել, եթե մարդը հասկանա, որ իր կյանքը վտանգի մեջ պահողը, անհանգստություններ, ցավեր ու տառապանքներ բերողը Հիսուս Քրիստոսի Գողգոթյան

խաչի ու թափված արյան շնորհիվ արդեն պարտված է: Յուրաքանչյուր աստվածապաշտ քրիստոնյայի դիմաց ոչ թե այս աշխարհի իշխանը համարվող սատանան է, այլ պարտված, խայտառակված սատանան. **«... և ջնջեց այն մեզ հակառակ ձեռագիրը հրամաններով, որ մեզ հակառակ էր, և այն վերցրեց ու խաչափայտին գամեց, իշխանություններին ու պետություններին մերկացրեց, հայտնապես խայտառակեց և նրանց հաղթեց Իրենով»** (Կողոս. 2.14,15): Յուրաքանչյուր քրիստոնյա պետք է հիշի, որ բավական չէ Հիսուս Քրիստոսին անձնական կյանքի Տեր ու Փրկիչ ընդունելը, անհրաժեշտ է մշտական շփում ունենալ Տիրոջ հետ: Ինչպես ձուկը ստեղծվել է լողալու համար, արծիվը՝ սավառնելու, այնպես էլ մարդն արարվել է Տիրոջ հետ ապրելու և հաղորդակցվելու համար: Առանց տերերի Տիրոջ հետ հաղորդակցվելու՝ նրա կյանքն ունայն է ու դատարկ: Նշանակություն չունի, թե մարդը որքան հարստություն, տաղանդներ կամ համբավ ունի: Քիչ չեն աշխարհահռչակ մարդիկ՝ լինեն դերասաններ, գիտնականներ կամ հոգեբաններ, ովքեր փորձել են երջանկացնել

մարդկանց, սակայն նրանց փորձը ժամանակավոր բնույթ է կրել, և ամենաահավորն այն է, որ իրենք էլ իրենց երազանքների իրականացման, հարստության ու փառքի գագաթնակետին ինքնասպանությամբ են վերջ տվել իրենց կյանքին: Հիշենք Էլվիս Փրեսլիին, Մերիլին Մոնրոյին... «Ինչպես պահպանել ամուսնությունը» ընտանեկան ներդաշնակության մասին գրքի հեղինակը ԱՄՆ-ում գնդակահարել է իր կոջը և Facebook-ում տեղադրել դիակի լուսանկարը: «Ինչպես ձեռք բերել ընկերներ և ազդեցություն գործել մարդկանց վրա» գրքի հեղինակ Դեյլ Կարնեգին մահացել է լիովին մենության մեջ: «Երեխան և նրա խնամքը» բեստսելլերի հեղինակ Բենջամին Սկոպիին սեփական որդիներն ուզում էին հանձնել ծերանոց: Հանրաճանաչ մանկավարժ Մարիա Մոնտեսորին իր որդուն հանձնել է խնամատար մի ընտանիքի՝ համարելով, որ այս երկրի վրա իր կոչումն է՝ ուրիշի երեխաներին նվիրվելը:

Մարդը, լույս աշխարհ գալով, կարճ ժամանակ անց սովորում է խոսել, քայլել... Քրիստոնյան, վերստին ծնունդ ստանալով, պետք է սովորի

հաղորդակցվել Տիրոջ հետ: Մարդուն ստեղծող Աստված նրան պարզել է ինչպես ֆիզիկական զգայարաններ՝ տեսողություն, լսողություն, համի և հոտի զգացում, շոշափելու և զգալու հնարավորություն՝ աշխարհն ընկալելու ու վայելելու համար, նույնպես և հոգևոր զգայարաններ՝ Տիրոջ հետ հաղորդակցվելու, իրեն շնորհված կյանքը ճիշտ ապրելու, սատանայի որոգայթներից խուսափելու համար (որպես օգնություն՝ առաջարկում եմ կարդալ «Ուրբեր են լսում Տիրոջ ձայնը» իմ հեղինակած գիրքը, 15 փետրվար, 2016թ., [gayanehakobyan.org](http://gayanehakobyan.org) բլոգ, ինչպես նաև Ք. Հեգինի «Ինչպես առաջնորդվել Սուրբ Հոգով» գիրքը):

Այն մարդը, ով մշտապես հաղորդակցվում է Տիրոջ հետ և առաջնորդվում Սուրբ Հոգով, համարձակ կարող է կրկնել սաղմոսերգուի հետևյալ խոսքերը. **«Տերն է իմ լույսը և իմ փրկությունը, ես ումից պիտի վախենամ, Տերն է իմ կյանքի զորությունը, ես ումից պիտի սարսափեմ: Չարերն ինձ վրա են գալիս, որ իմ մարմինն ուտեն, իմ նեղացնողներն ու թշնամիները սահում են ու վայր ընկնում: Թեև զորաբանակ էլ ինձ դեմ բա-**

նակ տա, իմ սիրտը չի վախենա, թեև պատերազմ էլ սկսվի իմ դեմ, ես դարձյալ Նրան կհուսամ: Մի բան եմ խնդրում Տիրոջից և այն շատ եմ փափագում, որ Տիրոջ տանը բնակվեմ իմ կյանքի բոլոր օրերում... որովհետև չար օրում Նա ծածկում է ինձ Իր խորանի մեջ, Նա թաքցնում է ինձ Իր խորանի ծածուկ տեղում և բարձրացնում է ինձ վեմի վրա: Եվ հիմա իմ գլուխը կբարձրանա իմ թշնամիների վրա, որ իմ չորս կողմում են, և Նրա խորանի մեջ գոհության պատարագներ կմատուցեմ, կերգեմ ու սաղմոս կասեմ **Տիրոջը**» (Սաղմ. 27.1-6):

Ճշմարիտ քրիստոնյան, ով ապրում է Աստծո տանը, այսինքն՝ մասնակից է լինում եկեղեցու գործերին, ծառայում Տիրոջն ամենատարբեր հարցերում, հաղորդակցվում Բարձրյալի հետ, երկրպագում ու խոնարհվում Նրան, մշտապես կապրի Նրա ներկայության մեջ: Աստծո Խոսքն ասում է. **«Հնազանդվեք Աստծուն, հակառակ կանգնեք սատանային, և նա կփախչի ձեզնից»** (Հակոբ. 4.7):

Սատանան է վախի հոգուն ուղարկում մարդու դեմ: **«Աստված չտվեց մեզ վախի հոգի, այլ՝ զորության, սիրո և զգոնության»** (Բ Տիմոթ. 1.7):

Այս խոսքերը ցույց են տալիս, որ վախը չի ծնվում մարդու հետ: Տերը մարդուն պարզևել է սիրո, գորության և զգոնության հոգի: Պարզապես, սատանան մարդուն խաբում է, գցում վախի որոգայթների մեջ՝ գողանալով նրա ուրախությունը, խաղաղությունը, ստեղծագործելու կարողությունը, անհատականությունը: Սատանան գող է, իսկ Աստծո Խոսքի համաձայն՝ **«Գողը գալիս է, որ գողանա, սպանի և կորցնի»** (Հովհ. 10.10):

Վախը սատանայի գլխավոր զենքերից է: Նույնիսկ աստվածաշնչյան հերոսները, տեսնելով բազում հրաշքներ, երբեմն անկարող էին լինում դիմակայելու վախի ձայնին և ընկնում էին նրա հյուսած թակարդը: Ինչպես նշեցի, համաձայն Աստծո Խոսքի, վախը հոգի է, անձ, որը չունի մարմին: Նա խոսում է մարդու հետ հրամայելով, պարտադրելով, մանիպուլյացիայի ենթարկելով: Մարդը, երբ լսում է վախին, կորցնում է սթափ միտքը: Թագավորաց երրորդ գրքի 18-րդ գլխում կարդում ենք, թե ինչպես է Եղիա մարգարեն, աղաղակելով Աստծուն, երկնքից կրակ իջեցնում, որը ոչնչացնում է ջրով ողողված ողջակեզը:



Դրանով իսկ նա ցույց է տալիս Իսրայելի Աստծո, տիեզերքի Արարչի մեծությունը, հզորությունը, միակ կենդանի Աստված լինելը: Սակայն 19-րդ գլխում կարդում ենք, թե ինչպես է Եղիան փախչում Հեզաբելից, ով հետապնդում էր նրան և ուզում էր սպանել: Նա բազմաթիվ անգամներ էր տեսել Աստծո մեծությունն ու հզորությունը, բայց պահի ազդեցության տակ տրվում է վախի հոգուն և փախչում իրեն սպանել ցանկացողից: **«Նա մեկ օրվա ճանապարհ անցավ անապատով և մի գիհիի տակ նստեց ու սրտանց ուզեց, որ մտնի, և ասաց. «Արդեն բավական է, ո՛վ Տեր, իմ հոգին ան...»: Եվ պանկեց ու քնեց...»** (Գ Թագ. 19.4): Տիրոջ հրեշտակը հայտնվում է նրան, կերակրում ու զորացնում: Եղիան շարունակում է իր ճանապարհը ևս քառասուն օր ու թաքնվում մի քարայրում: **«Եվ ահա Տիրոջ Խոսքը եղավ նրան ու հարցրեց. «Ինչ ունես այստեղ, Եղիա՛»:** Եվ նա ասաց. «... Մենակ ես եմ մնացել, և իմ հոգին որոնում են՝ սպանելու»: Եվ Տերն ասաց. «Դ՛ուրս եկ ու կանգնիր սարի վրա...»: Եվ ահա Տերն անցնում էր, և մի մեծ ու զորավոր հողմ պատռեց սարերը և կոտ-

րատեց ապառաժները Տիրոջ առջև, բայց Տերն այն հողմի մեջ չէր: Եվ հողմից հետո երկրաշարժ եղավ, բայց Տերը երկրաշարժի մեջ չէր: Եվ երկրաշարժից հետո կրակ, բայց Տերը կրակի մեջ չէր: Եվ կրակից հետո մի մեղմ ու բարակ ձայն եղավ: Եվ երբ որ Եղիան լսեց այն, երեսը ծածկեց վերարկուի միջոցով ու դուրս եկավ կանգնեց քարայրի դռան մոտ: Եվ ահա մի ձայն եկավ նրան ու ասաց. «Այստեղ ինչ ունես, Եղիա՛»: Եվ նա ասաց. «Մեծ նախանձավորություն ունեցա Ջորաց Տեր Աստծո համար, որ Իսրայելի որդիները Քո ուխտը թողել են, Քո սեղանները քանդել են և Քո մարգարեներին սրով սպանել են, ու մենակ ես եմ մնացել, և իմ հոգին էլ որոնում եմ, որ սպանեն»: Եվ Տերն ասաց նրան. «Ետ դարձիր ու գնա...»» (Գ Թագ. 19.9-15): Տերը Եղիային հանձնարարություններ է տալիս ու ավելացնում. «Ես Ինձ համար թողել եմ Իսրայելի մեջ յոթ հազար հոգի, որ ծունկ չծռեցին Բահաղի առջև ու նրան չհամբուրեցին»: Եվ Եղիան այնտեղից գնաց...» (Գ Թագ. 19.18,19): Եղիան այնպես էր կլանվել վախի հերյուրանքներով, որ մտածում էր, թե

կենդանի Աստծուն ճշմարտապես պաշտողներից միայն ինքն է մնացել, իսկ մյուսները կամ սպանվել են, կամ դարձել Բահադին երկրպագողներ: Մինչդեռ Տերը ցույց է տալիս, որ Ինքը փոթորկի, երկրաշարժի ու կրակի մեջ չէ, այլ՝ մեղմության ու խաղաղության, ու դեռ Իր համար էլ թողել է յոթ հազար ճշմարիտ երկրպագողների: Եղիան էրբ իմացավ ճշմարտությունը. երբ որ դուրս եկավ քարայրից: Մարդը պետք է դուրս գա վախի կառուցած քարայրից, նա պիտի ընդմիջտ հիշի, որ այն, ինչ գոռում է, ավերում ու ոչնչացնում, Աստծուց չէ: Վախը գոռում է, ավերում, ոչնչացնում ու ստիպում թաքնվել քարայրում: Տերը խաղաղության ու մեղմության մեջ է: Հետևելով Նրա խաղաղությանը՝ կարելի է դուրս գալ վախի կապանքներից, նրա կառուցած քարանձավից:

Հեսու 7.6-9-ում գրված է. **«Եվ Հեսուն իր հանդերձները պատռեց Տիրոջ տապանակի առջև ու երեսնիվայր ընկավ գետնին մինչև իրիկուն: Ինքը և Իսրայելի ծերերը իրենց գլխին հող ցանեցին: Եվ Հեսուն ասաց. «Ո՛հ, Տէր Եհովա, ինչո՞ւ այս ժողովրդին Իսրայելի այս կողմն անցկաց-**

րի, որ ամորհացիների ձեռքը մատնես ու կորցնես: Երանի Հորդանանի այն կողմում գոհ լինելով մնայինք: Աղաչում եմ, Տէր, ես ինչ ասեմ Իսրայելն իր թշնամիների առջև մեջք դարձնելուց հետո, որովհետև քանանացիները և երկրի բոլոր բնակիչները լսելով՝ մեզ կպաշարեն ու մեր անունը երկրի վրայից կջնջեն: Այն ժամանակ ինչ պիտի անես **Քո մեծ անունը**»: Հետուն բազում անգամներ էր տեսել Արարիչ Աստծո հզոր ու ամենակարող լինելը: Նա Մովսեսի կողքին էր, երբ անցնում էին անապատով: Հետուն տեսել էր, որ ժողովրդի հագուստն ու կոշիկները չեն մաշվում, տեսել էր երկնքից թափվող մանանաս, տեսել էր, որ անապատի օձերն ու կարիճներն անգոր են իրենց վնասելու, տեսել էր անապատում ժայռից բխող ջուրը, Կարմիր ծովի և Հորդանանի կիսվելն ու հեղեղասաստ ջրերի միջով ժողովրդի անվնաս անցնելը, տեսել էր Երիթովի պարսպի քանդվելը... Նա բազում-բազում հրաշքներ էր տեսել, բայց մի պահ, երբ տեսնում է, որ թշնամին ոչնչացնում է Իսրայելը, խոնարհվելու և Տիրոջից պատճառը հարցնելու փոխարեն՝ ենթարկվում

է վախի հոգուն, ակնթարթորեն մոռանում բոլոր հրաշքներն ու դեռ ողբում Տիրոջ համար՝ մտահոգվելով, թե Տերը էլ որտեղ պիտի ցույց տա իր մեծությունը: Հզոր Աստված միշտ գալիս և ցույց է տալիս հաղթանակ պարզևող ճանապարհը: Նա Հեսուին նույնպես հայտնում է իրենց պարտության պատճառը և տալիս ռազմավարություն, որին հետևելով՝ նրանք վայելում են փայլուն հաղթանակի բերկրանքը:

Աստվածաշունչը կարդալիս մենք ականատես ենք լինում վախի ավերիչ գործունեության բազմաթիվ օրինակների: Ո՞ւմ կյանքում վախը տեղ չի գտնում. նրա, ով ամբողջությամբ ապավինում է Տիրոջը՝ Եհովա Աստծուն: Այդ մարդկանցից էր Դավիթը: Նա համոզված էր, որ Աստծո շուրթերից դուրս եկած խոսքն անպայման իրականանալու է, այդ պատճառով ցանկացած իրավիճակում ոչ թե տրվում էր վախի գոռում-գոչումին, մահ սփռող ավերիչ գործողություններին, այլ աղաղակում էր տերերի Տիրոջը և ամուր կառչում Նրանից: Հիշենք, թե ինչպես Դավիթը դուրս եկավ Գողիաթի դեմ: Գողիաթը ն՛ արտաքինով էր

ահարկու, և՛ իր հոխորտանքով. «Եվ մի միջնամարտիկ էր դուրս եկել փղշտացիների բանակից՝ անունը Գողիաթ, գեթացի, բարձրությունը մեկ կանգուն ու մեկ թիզ: Նրա գլխին կար մի պղնձի սաղավարտ և մի հյուսած զրահ էր հագել, զրահի ծանրությունը՝ հինգ հազար սիկղ պղինձ: Եվ նրա ոտքերի վրա պղնձի սոնապաններ և ուսերի մեջ պղնձի գեղարդ.... Նա կանգնեց և կանչեց Իսրայելի գնդերին ու ասաց. «Ինչո՞ւ եք դուրս եկել ու պատերազմի շարվել.... Ձեր միջից մեկին ընտրեք, որ իջնի ինձ մոտ: Եթե՛ նա կարողանա ինձ հետ մենամարտել ու ինձ մեռցնել, մենք ձեր ծառաները կլինենք, բայց եթե՛ ես հաղթեմ և նրան մեռցնեմ, դուք մեր ծառաները կլինեք»: ....Եվ երբ Սավուղն ու ամբողջ Իսրայելը լսեցին այս խոսքերը, զարհուրեցին ու շատ վախեցան: ....Եվ այն փղշտացին քառասուն օր առավոտ ու իրիկուն մոտենում էր ու կանգնում» (Ա Թագ. 17.4-16): «Եվ Դավիթն առավոտ կանուխ վեր կացավ, ոչխարները պահապանին հանձնեց ու գնաց.... Եվ երբ նա եղբայրների հետ խոսում էր, ահա այն միջնամարտիկը՝ փղշտացի Գողիաթ անունով, որ

Գեթից էր, գնդերից դուրս եկավ ու նույն խոսքերը խոսեց, և Դավիթը լսեց: Եվ Իսրայելի բոլոր մարդիկ երբ նրան տեսան, նրա երեսից փախան ու շատ վախեցան: ....Եվ Դավիթը խոսեց իր հետ եղող մարդկանց հետ. «Ի՞նչ կանեն այն մարդուն, ով այս փղշտացուն մեռցնի ու Իսրայելից նախատինքը վերացնի, որովհետև այս անթլփատ փղշտացին ճվ է, որ կենդանի Աստծո զորքերին նախատի»» (Ա Թագ. 17.20-26): Դավթի եղբայրները նախատում են նրան ու դեռ զրպարտում՝ իբր նա իր սրտի չարությունից ու հպարտությունից է այդպես խոսում: Դավիթն ուշադրություն չի դարձնում նրանց վիրավորիչ խոսքերին. նա ճանաչում էր իր Աստծուն ու նպատակի մարդ էր: «Եվ Դավիթը Սավուդին ասաց. «Սրա պատճառով ոչ մեկի սիրտը չթուլանա: Ծառադ կգնա ու այս փղշտացու հետ կմարտնչի»: Եվ Սավուդը Դավթին ասաց. «Դու չես կարող, որովհետև դու երիտասարդ ես, բայց նա իր մանկությունից ի վեր պատերազմի մարդ է»: Եվ Դավիթն ասաց Սավուդին. «Ծառադ իր հոր ոչխարները արածեցնում էր, և առյուծը կամ արջը գալիս էին ու հոտե-

րից ոչխար էին տանում: Ես նրանց ետևից գնում էի, զարկում էի ու նրանց բերանից ազատում: Եվ երբ նրանք գալիս էին ինձ վրա, բռնում էի մորուքից, խփում էի ու սատկեցնում: Ծառադ առյուծ էլ է սպանել, արջ էլ, այս անթլփատ փղշտացին էլ թող նրանցից մեկի նման լինի, որովհետև կենդանի Աստծո գորքերին նախատեց»: Եվ Մավուղն ասաց. «Գնա՛, թող Տերը քեզ հետ լինի»» (Ա Թ-ագ. 17.20-37): «Եվ Դավիթն ասաց փղշտացուն. «Դու սրով, նիզակով ու գեղարդով ես գալիս ինձ վրա, բայց ես գալիս եմ քեզ վրա Ջորաց Տիրոջ՝ Իսրայելի գորքերի Աստծո անունով, որին դու նախատեցիր: Այսօր Տերը քեզ իմ ձեռքը կմատնի, ու ես քեզ կմեցնեմ ու քո վրայից գլուխդ կառնեմ: Եվ փղշտացիների բանակի դիակներն այսօր երկնքի թռչուններին ու երկրի գազաններին կտամ, որպեսզի ամբողջ երկիրն իմանա, որ Իսրայելն Աստված ունի: Եվ այս ժողովուրդն իմանա, որ Տերը սրով ու նիզակով չի ազատում, որովհետև պատերազմը Տիրոջն է, և Նա ձեզ մեր ձեռքը կմատնի: Եվ երբ փղշտացին եկավ ու Դավթին մոտեցավ, Դավիթը շուտով



վազեց պատերազմի ասպարեզը՝ փղշտացուն դիմավորելու: Եվ Դավիթն իր ձեռքը մախաղի մեջ մտցրեց, այնտեղից մի քար վերցրեց և պարսով շարտեց ու փղշտացու ճակատին խփեց: Եվ քարը նրա ճակատի մեջ փորվեց, և նա երեսնիվայր գետինն ընկավ: Այսպես Դավիթը պարսով և քարով փղշտացուն հաղթեց. զարկեց փղշտացուն և մեռցրեց նրան, բայց Դավթի ձեռքին սուր չկար: Եվ Դավիթը վազեց, փղշտացու վրա կանգնեց և նրա սուրն առավ, պատյանից հանեց ու նրան մեռցրեց, հետո գլուխը նրանով կտրեց: Եվ երբ փղշտացիներն իրենց զորավոր մարդու մեռնելը տեսան, փախան» (Ա Թ-ագ. 17.45-52): Դավիթն իր ամբողջ կյանքի ընթացքում մշտապես հիշում է, որ իր տերը հզոր, ամենակարող ու հավատարիմ Եհովա Աստվածն է՝ տիեզերքի Արարիչը: Ահա թե ինչու, երբ պայքար է սկսվում գահի համար, երբ Սավուղը հետապնդում է նրան, նա մշտապես ապավինում է Տիրոջը, իր դատը հանձնում Նրան, մարդկորեն հաշվեհարդար չի տեսնում և մարդկորեն չի ձգտում պահպանել իր գահը, թագավորի կոչումն ու օծությունը:

Նրա համարձակությունը բոլոր իրավիճակներում հիմնված էր ոչ թե սեփական ուժերի, փորձառության ու խելքի վրա, այլ՝ Իսրայելի հզոր Աստծո հավատարմության ու մշտապես հաղթող լինելու: Իր կյանքի ամենանեղ, ամենաահավոր պայմաններում նույնիսկ Դավիթը չէր մոռանում Տիրոջ տված նախկին հաղթանակները: Այդ հաղթանակների մեջ էր նա տեսել Աստծո հավատարմությունը, հզորությունը, ամենակարողությունը, արդարամտությունը, սերը: Այդ հաղթանակներն էին նրան հիշեցնում, որ նա իր կյանքի ցանկացած իրավիճակում պիտի ապավինի միմիայն Աստծուն:

## ԻՆՉՊԵՍ ԱԶԱՏՎԵԼ ՎԱԽԻՑ

«**Ա**ստված չտվեց մեզ վախի հոգի, այլ՝ գործության, սիրո և զգոնության» (Բ Տիմոթ. 1.7): Քննենք յուրաքանչյուրը՝ առանձին-առանձին:

Տերը մեզ տվել է սիրո հոգի: Նա նույնպես կարող է խոսել, զսպել, առաջնորդել... Սա ասում է Աստվածաշունչը: «Տերը երկայնամիտ է, քաղցր է: Տերը չի նախանձում, չի գոռոզանում, չի հպարտանում: Տերը չի լրբանում, իրենը չի որոնում, չի գրգռվում, չարը չի մտածում, անհրավության վրա չի ուրախանում, այլ ուրախանում է ճշմարտության հետ: Տերը ամեն բանի դիմանում է, ամեն բանի հավատում է, ամեն բանի համար հույս ունի, ամեն բանի համբերում է» (Ա Կորնթ. 13.4-7): Սիրով առաջնորդվելով՝ մարդը կառուցում է, զարգացնում, բժշկություն բերում, խաղաղություն ու երջանկություն սփռում:

Իսկ ինչ է անում վախը: Վախը գողանում է ուրախությունը, կործանում կառուցածը՝ լինի ընտանիք, գործ, կոչում, ծառայություն... Ո՞ւմ են բնորոշ այս հասկանիչները: Իհարկե, սատանային՝ գողին. **«Գողը գալիս է, որ գողանա, սպանի և կորցնի»** (Հովհ. 10.10): Վախը սատանայի գլխավոր զենքերից մեկն է:

Աստված սեր է, և քանի որ մարդն ստեղծված է Աստծո **«պատկերով ու նմանությամբ»** (Ծննդ. 1.26), այդ սերը Տիրոջից դրված է մարդու մեջ: Պարզապես, նա պետք է կարողություն ու ցանկություն ունենա այն դրսևորելու: Յուրաքանչյուր ոք, ով սիրում է իրեն վատը կամեցողին՝ նախանձողին, անիծողին, զրպարտողին, բոլոր իրավիճակներում իրեն թշնամաբար տրամադրվողին, կհաղթի. **«Բայց Ես ասում եմ ձեզ՝ սիրեք ձեր թշնամիներին, օրհնեք ձեզ անիծողներին, բարի՛ արեք ձեզ ատողներին, աղոթեք ձեզ չարչարողների ու հալածողների համար, որ ձեր երկնային Հոր որդիները լինեք: Որովհետև Նա Իր արեգակը ծագեցնում է չարերի ու բարիների վրա.... Որովհետև եթե ձեզ սիրողներին սի-**

րեք՝ ինչ վարձք ունեք. չէ՞ որ մաքսավորներն էլ նույնն են անում: Եվ եթե միայն ձեր եղբայրներին բարև տաք՝ ինչ ավելի բան եք անում. չէ՞ որ մաքսավորներն էլ են այդպես անում: Դուք կատարյալ եղեք, ինչպես ձեր Հայրը, որ Երկնքում է, կատարյալ է» (Մատթ. 5.44-48): Մարդկության բազմադարյա կյանքը ցույց է տվել, որ նա, ով սիրում է՝ հաղթում է, իսկ հակառակ կողմը՝ պատժվում: Ցավոք, մարդ արարածը դժվարությամբ է սա հասկանում: Լինում են դեպքեր, երբ մարդիկ, ենթարկվելով մարմնի ցանկությանը, լցվում են վրեժխնդրությամբ իրենց չարը կամեցողների նկատմամբ և թունավորում իրենց իսկ կյանքը, երբեմն էլ ստանում տարբեր հիվանդություններ ու մահանում: Կողքինները, չհասկանալով, զարմանում են ու մտածում. «Ինչո՞ւ մահացավ, չէ՞ որ նա պայքարում էր չարի դեմ, մի՞թե սա արդար է. նրան նախանձողները բարգավաճում են ու վայելում կյանքը, իսկ նա...»: Նրանք չեն հասկանում, որ Աստծո պատվիրանը չպահողը՝ **լեզուն չսանձողը, քննադատողը, բարկությամբ ու ատելությամբ առաջնորդվողը** իր իսկ անձի մահվան ճա-

նապարհն է պատրաստում. «Բայց մարդկանց լեզուն ոչ ոք չի կարող նվաճել, մի անզուսպ չար է՝ լցված մահաբեր թույնով: Նրանով օրհնում ենք Աստծուն՝ Հորը, և անիծում մարդկանց, որ Աստծո նմանությունով են ստեղծված: Միևնույն բերանից դուրս են գալիս օրհնություն և անեծք: Եղբայրներս, այդպես չպետք է լինի: ...Որովհետև ուր նախանձ ու կռիվ կա, այնտեղ անկարգություն ու ամեն չար բաներ կան» (Հակոբ. 3.8-10,16): Մարդիկ երբեմն ոչ միայն բարկանում են ու ատելությամբ լցվում իրենց զրպարտողի, թշնամաբար տրամադրվողի նկատմամբ, այլև, լսելով վախի հոգուն ու առաջնորդվելով նրա թելադրանքով, սկսում են քծնել, շողոքորթել ու ստրկաբար ծառայել նրան... Տերը քննում է մարդու սիրտը ու գիտի բոլոր դրդապատճառները: Այդ պատճառով ասում է. «Մի՛ վախեցիր...»: Մարդը Հիսուս Քրիստոսի արյունով է գնվել ստրկությունից ու մշտապես Աստծուն պիտի ապավինի վախի որոգայթներում չհայտնվելու համար: Եթե Աստծո Խոսքն ասում է՝ սիրի՛ր, նշանակում է միակ ճշմարտությունը դա է:

Երբեմն մարդիկ «սիրել» ասելով՝ հասկանում են, թե մշտապես պետք է լինեն իրենց ատողի աչքի առջև և ամեն պահի ցուցադրեն իրենց սերը: Դա կարող է հակառակ ազդեցությունն ունենալ: Մշտապես թշնամու կամ ատողի աչքերի առջև գտնվելը կարող է նրան գրգռել, այնպիսի բարկությամբ լցնել, որ նա ընդունակ լինի նույնիսկ սպանելու: Եվ ամեննախ կարիք չկա, որ մարդը մշտապես ցուցադրի այն սերը, որ ունի իրեն ատողի կամ նախանձողի նկատմամբ: Նման դեպքերում կարելի է չչփվել կամ հարաբերությունները նվազագույնի հասցնել՝ ավելորդ խնդիրներից խուսափելու համար: «Զոհի» կարգավիճակում հայտնվածը կարող է իր սերը ցուցադրել միայն այն ժամանակ, երբ իրեն ատող անձնավորությունը կարիքի կամ վտանգի մեջ հայտնվի: Հիշենք Դավթին, ով «Աստծո սրտի համեմատ մարդ էր»: Դավիթը, Աստծո կամքի համաձայն, Սամուել մարգարեի ձեռքով օծվել էր որպես Իսրայելի թագավոր. «...Այն ժամանակ Տերն ասաց. «Վեր կաց, օձիր նրան, որովհետև նա է»: Եվ Սամուելը յուղի եղջյուրն առավ ու օծեց

նրան.... և այն օրից Տիրոջ Հոգին իջավ Դավթի վրա....» (Ա Թ-ագ. 16.12,13): Սավուղը, իմանալով, որ Տերը թագավորական զգեստը պատռել է իր վրայից իր իսկ անհնազանդության պատճառով և Դավթին է ընտրել որպես Իսրայելի թագավոր, հետապնդում է Դավթին, որ սպանի: Վախը, ատելությունը, նախանձը պարուրել էին նրան: Դավթի համար տարբեր հնարավորություններ են ստեղծվում՝ սպանելու Սավուղին, բայց նա բռնորդ եպարքերում հիշում է, որ իրավունք չունի ձեռք բարձրացնելու Աստծո օձյալի վրա. **«Եվ Դավիթը Աբեսայի հետ գիշերը ժողովրդի մեջ մտավ, և ահա Սավուղը կառքերի մեջտեղը պառկած-քնած էր: Նրա նիզակը գլխի մոտ ցցված էր, և Աբեններն ու ժողովուրդը նրա շուրջը պառկել էին: Եվ Աբեսան Դավթին ասաց. «Աստված այսօր քո թշնամուն քո ձեռքը մատնեց. թնյլ տուր, որ նիզակով մեկ անգամից զարկեմ նրան ու չկրկնեմ»:** Բայց Դավիթն Աբեսային ասաց. **«Մի՛ մեռցրու նրան, որովհետև ո՛վ կարող է Տիրոջ օձյալի վրա ձեռք բարձրացնել ու անպարտ լինել: Տերը կենդանի է, որ նրան կզարկի, կամ նրա օրը կգա,**



ու նա կմտնի, կան պատերազմի մեջ կմտնի ու կմտնի: Տերը չանի, որ ես ձեռքս մեկնեմ Տիրոջ օծյալի դեմ. միայն թե հիմա նրա գլխի մտտի նիզակն ու ջրի կուժը առ և գնանք»: Եվ Դավիթը Սավուղի գլխի մտտից նիզակն ու ջրի կուժը վերցրեց, ու գնացին: Եվ տեսնող չկար, իմացող չկար, զարթնող չկար, որովհետև ամենքը քնել էին, քանի որ Տիրոջ կողմից նրանց վրա խորը քուն էր իջել» (Ա Թագ. 26.7-12): Դավիթը ոչ միայն մշտապես հիշում է, որ Տիրոջ օծյալի վրա չպետք է ձեռք բարձրացնի, այլև շարունակում է սիրել Սավուղին ու յուրաքանչյուր անգամ բարություն ցուցաբերել նրա նկատմամբ. «Եվ հետո Դավիթը վեր կացավ, այն քարայրից դուրս եկավ և Սավուղի ետևից կանչելով՝ ասաց. «Ո՛վ տեր իմ, թագավոր»: Եվ երբ Սավուղը ետ նայեց, Դավիթը երեսնիվայր ծովելով՝ խոնարհություն արեց և Սավուղին ասաց. «Ինչո՞ւ ես մարդկանց խոսքերին ականջ դնում, որ ասում են, թե ահա Դավիթը քո չարությունն է ուզում: Ահա քո աչքերը տեսնում են, որ Տերն այսօր քարայրի մեջ քեզ իմ ձեռքը մատնեց, և ասացին, որ քեզ մեռցնեմ, բայց

Ես քեզ խնայեցի և ասացի. «Ես իմ ձեռքն իմ տիրոջ վրա չեմ բարձրացնի, որովհետև նա Տիրոջ օծյալն է»: Եվ տես, հայր իմ, քո վերարկուի ծայրը իմ ձեռքին է, և ես քո վերարկուի ծայրը կտրելով՝ քեզ չմեղցրի: Հասկացիր և տես, որ իմ ձեռքին չարություն և անօրենություն չկա, և քո դեմ մի հանցանք չեմ արել, բայց դու ուզում ես իմ անձը մեղցնել: Տերը դատաստան անի իմ ու քո մեջ, և Տերը իմ վրեժը քեզնից առնի, բայց իմ ձեռքը քեզ վրա չի լինի: Իսրայելի թագավորը որի՞ ետևից է դուրս եկել, և դու որի՞ ետևից ես ընկնում՝ մի մեռած շան, մի լուխ: Տերը դատավոր լինի և իմ ու քո մեջ դատաստան անի, տեսնի ու իմ դատը վարի և ինձ քո ձեռքից ազատի»» (Ա Թագ. 24.9-16):

Դավիթը նույնիսկ սպանում է այն մարդուն, ով իր իսկ բերանով վկայություն է տալիս, թե ինչպես է սպանել Սավուդին և նրա թագն ու բազկի ապարանջանը հասցրել Դավթին. «Եվ նրան լուր բերող պատանին ասաց. «... ես նրա վրա կանգնեցի և նրան մեղցրի, որովհետև հասկացա, որ նա իր ընկնելուց հետո չի ապրի, և նրա գլխի թագն ու նրա բազկի ապարանջանն առա և այս-

տեղ բերեցի իմ տիրոջ համար»: Այն ժամանակ Դավիթն իր հանդերձները բռնեց և պատռեց, նույնպես էլ նրա հետ լինող բոլոր մարդիկ: Եվ նրանք Սավուղի համար և նրա որդի Հովնաթանի համար և Տիրոջ ժողովրդի համար և Իսրայելի տան համար սուգ արեցին և լաց եղան և մինչև իրիկուն ծոմ պահեցին, որ նրանք սրով ընկել էին: Եվ Դավիթն իրեն լուր բերող պատանուն ասաց. «Դու որտեղից ես»: Եվ նա ասաց. «Ես մի պանդուխտ ամաղելկացու որդի եմ»: Եվ Դավիթը նրան ասաց. «Ինչպե՞ս չվախեցար, ձեռքդ մեկնեցիր և Տիրոջ օծյալին մեռցրիր»: Եվ Դավիթը երիտասարդներից մեկին կանչեց և ասաց. «Մոտեցի՛ր, սրան մեռցրո՛ւ»: Եվ նա նրան զարկեց, ու նա մեռավ: Եվ Դավիթը նրան ասաց. «Քո արյունը քո գլուխը, որովհետև քո բերանը քեզ համար վկայություն տվեց՝ ասելով. «Տիրոջ օծյալին ես մեռցրի»» (Բ Թագ. 1.6-16): Դավիթը ողբում է Սավուղի ու նրա որդիների մահը:

Աստծո նկատմամբ Դավթի անխարդախ սերն ու վստահությունը ճանապարհ պատրաստեցին, որ նա դառնար ոչ միայն Իսրայելի թագավորը,

այլն թագավորների Թագավորի նախահայրը.  
«... Դավթին նրանց համար թագավոր կանգնեց-  
րեց ու նրա համար վկայություն տվեց ու ասաց.  
«Հեսեի որդի Դավթին գտա Իմ սրտի պես մարդ,  
որ նա Իմ ամբողջ կամքը կանխի»: Նրա զավակից  
Աստված Իր խոստմունքի պես իսրայելացիների  
համար Հիսուս Փրկչին տվեց» (Գործք 13.22,23):

Աստծո սերն այնքան մեծ էր մարդու նկատ-  
մամբ, որ Նա տվեց Իր միածին Որդուն. «Եվ Աստ-  
ված այնքան սիրեց աշխարհը, որ տվեց Իր միա-  
ծին Որդուն...» (Հովհ. 3.16): Հիսուս Քրիստոսի  
սերն այնքան մեծ էր մարդու նկատմամբ, որ Նա  
հաղթեց աշխարհի մեղքի զգացումով լի բաժակը  
խամելու վախը. «Այն ժամանակ նրանց ասաց. «Հո-  
գիս մեռնելու չափ տրտմած է...»: Եվ մի քիչ առաջ  
գնալով՝ երեսնիվայր ընկավ և աղոթում էր. «Իմ  
Հայր, եթե կարելի է, թող այս բաժակն Ինձնից  
անցնի, սակայն ոչ թե ինչպես Ես եմ կամենում,  
այլ՝ ինչպես Դու»» (Մատթ. 26.38-40): Նա հաղ-  
թեց հռոմեական զինվորների կողմից ծաղրվելու  
և խոշտանգվելու վախը. «Եվ Նրան մերկացնելով՝  
Նրա վրա մի կարմիր քղամիդ գցեցին: Եվ փշերից

մի պսակ ուրբեցին, Նրա գլխին դրեցին ու Նրա աջ ձեռքին՝ մի եղեգ: Նրա առջև ծնկի գալով՝ ծաղրում էին ու ասում. «Ո՛ղջ եղիր, հրեաների՛ թագավոր»: Եվ Նրա վրա թքելով՝ եղեգն առնում էին ու գլխին ծեծում: Եվ երբ ծաղրեցին Նրան, կարմիր քղամիդը հանեցին Նրանից, հագցրին Իր հանդերձները ու տարան խաչելու» (Մատթ. 27.28-31): Նա հաղթեց վախը ու խաչվեց՝ մարդկությանը սատանայի գերությունից ազատելու համար. «Նա անարգված և մարդկանց երեսից ընկած, հարվածների տեր ու ցավի տեղյակ եղավ, մի այնպիսին, որից պետք էր երեսը ծածկել: Անարգված էր, և մենք Նրան ոչինչ էինք համարում: Հիրավի, Նա մեր ցավերը վերցրեց ու մեր վշտերը բեռնեց Իր վրա.... Նա մեր մեղքերի համար վիրավորվեց և մեր անօրենությունների համար հարվածվեց, մեր խաղաղության պատիժը Նրա վրա եղավ, ու Նրա վերքերով մենք բժշկվեցինք» (Եսայի 53.3-5), «Որովհետև գիտեք մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքը, որ ձեզ համար աղքատացավ Նա, որ հարուստ էր, որ դուք Նրա աղքատությունով հարստանաք» (Բ Կորնթ. 8.9):

Յուրաքանչյուր մարդ ցանկացած իրավիճակում կարող է կշեռքի նժարներին դնել վախը և սերը: Եթե սերը մեծ է, կարող է հաղթել ցանկացած վախի: Դա վերաբերում է նաև ուսումնական քննություններին, բարձրություններ հաղթահարելուն, Հիսուս Քրիստոսի խաչելության բարի լուրը մարդկությանը հասցնելուն: Լինում են դեպքեր, երբ մարդու մեջ այս կամ այն երևույթի կամ անձի նկատմամբ վախն ավելի մեծ է, քան սերը: Այդ դեպքում նա իր ներքին մարդու հետ պետք է հաշվի նստի ու քննարկի՝ ինչ է կորցնում, երբ տրվում է վախի հոգուն: Հաշվարկելիս առաջին հերթին անհրաժեշտ է նկատի առնել այն փաստը, որ Աստվածաշունչն ասում է. **«Իսկ վախկոտները և անհավատները, պիղծերը և մարդասպանները, պոռնիկները և կախարդները, կռապաշտները և ստախոսները այս լճում կլինեն, որը կրակով ու ծծումբով է վառված»** (Հայտն. 21.8), այնուհետև պատվիրում է. **«Մի՛ վախեցիր...»** (Եսայի 43.1): Աստվածաշնչյան պատգամները դասելով առաջին տեղում՝ մարդը պետք է քննարկումը շարունակի և խորհի՝ արժե՞ արդյոք վախի հոգուն են-

թարկվելու պատճառով ոտնահարել Աստծո պատգամը, հավիտենական կյանքն անցկացնել դժոխքում՝ կրակի ու ծծմբի մեջ և այս կյանքում զրկվել հրաշալի ապագա ստեղծող ու հաճույքներ պարգևող մի շարք հնարավորություններից: Նույնիսկ այն դեպքում, երբ մարդը տեսնում է, որ իր ներքին մարդու, մտերիմների, հասարակության հետ բազմաթիվ քննարկումներից հետո էլ չի կարողանում դուրս գալ վախի ճիրաններից (թեև մտքով ընկալում է, որ շատ բան կկորցնի՝ տրվելով վախի հոգուն), դարձյալ չպիտի հանձնվի: Աստծո Խոսքն ասում է. **«Միրո մեջ վախ չկա»** (Ա Հովհ. 4.18), սա նշանակում է, որ մարդն իր մեջ պիտի զարգացնի սերը, թույլ տա, որ այն աճի Սուրբ Հոգու գործությամբ: **«Որ Քրիստոսը հավատքով բնակվի ձեր սրտերում, և դուք սիրով արմատ գցած ու հաստատված լինեք: Որ ամեն սուրբերի հետ իմանաք, թե ինչ է լայնությունը ու երկարությունը, բարձրությունը ու խորությունը: Որ ճանաչեք Քրիստոսի սերը, որ ամեն գիտությունից գերազանց է, որ Աստծո ամեն լիությունով լցվեք: Նա, որ կարող է առատությամբ**

**անել ամեն բաներից ավելի, քան որ խնդրում ենք  
և իմանում, այն Զորության չափով, որ մեր մեջ  
ներգործում է» (Եփեա. 3.17-20), «Սերը երկայնա-  
միտ է, քաղցր է, սերը չի նախանձում, չի գոռոզա-  
նում ....» (Ա Կորնթ. 13, խորհուրդ եմ տալիս այս  
գլուխն ամբողջությամբ կարդալ ու հավատքով  
դավանել):**

Սերը բոլոր իրավիճակներում հաղթում է վա-  
խը: Քարոզիչներից մեկը պատմում էր մի տղա-  
մարդու մասին, ով սարսափելի վախ ուներ կա-  
մուրջներից: Նա ոչ միայն չէր կարողանում կանգ-  
նել կամրջի վրա, որի տակով ջուր էր հոսում, այլև  
նույնիսկ մեքենայով չէր երթևեկում կամրջի վրա-  
յով: Մի անգամ նա տեսնում է, որ իր որդին կախ-  
վել է կամրջի ձողերից ու մաքառում է, որ չընկնի  
ծովը: Հայրական սերը վտանգի մեջ գտնվող որդու  
նկատմամբ այնպես է հորդում, որ նա, անտեսելով  
վախը, նետվում է կամրջի վրա ու փրկում որդուն:

Ասում են՝ խիզախը նա չէ, ով չի վախենում,  
այլ նա, ով չնայած վախին՝ ընդունակ է գործելու:

Սերը մեզ տվել է գորության հոգի: Սուրբ Հո-  
գին գորության հոգի է: Ինչ է անում գորության



հոգին. Նա հրաշքներ է գործում, բժշկում մարդկանց, նույնիսկ՝ անհույսներին, հարություն տալիս մեռելներին...

Ինչ է անում վախը: Վախը կաթվածահար է անում ու գամում անկողնուն: Նա գողանում է հույսը, գերության վերցնում առողջ միտքը և թույլ չի տալիս, որ մարդը մտածի լավագույնի մասին: Վախը՝ նպատակադրված, մարդուն հասցնում է գերեզման: Զորության հոգին ու վախի հոգին հակապատկերներ են: Վերստին ծնված յուրաքանչյուր քրիստոնյայի մեջ ապրում է այն զորության հոգին, որ Հիսուս Քրիստոսին հարություն տվեց մեռելներից: Այդ զորության հոգին ավելին է, քան աշխարհի իշխանը՝ սատանան. **«Դուք Աստուծոց եք, որդյակներ, և հաղթեցիք նրանց, որովհետև Նա, որ ձեր մեջ է, ավելի մեծ է, քան նա, որ աշխարհի մեջ է»** (Ա Հովհ. 4.4): Սատանան որքան էլ փորձություններ բերի, և որքան էլ օգտագործի վախի հոգուն՝ նպատակ ունենալով մարդուն հեռացնել Տիրոջ կամքից, որը բարին է, հաճելին ու կատարյալը (Հռոմ. 12.2), միևնույն է, մարդը Աստուծոց իրեն տրված զորության հոգով կարող

է հաղթել վախի հոգուն. **«Աստված չտվեց մեզ վախի հոգի, այլ՝ զորության, սիրո և զգոնության»** (Բ Տիմոթ. 1.7):

Իմ կյանքից մի օրինակ բերելով՝ վկայեմ, թե ինչպես հաղթեցի վախի հոգուն՝ օգտագործելով Հիսուս Քրիստոսի անվան հեղինակությունը և ազատ արձակելով իմ մեջ ապրող զորության հոգու ամենակարողությունը:

2015 թվականի հունվարին Բրյուսելում էի: Ընդհանրապես, որևէ գործ ձեռնարկելիս, նույնիսկ արձակուրդի ընթացքում որևէ երկիր մեկնելիս միշտ Տիրոջից եմ հարցնում, թե ուր գնամ և որքան ժամանակով: Այս անգամ դարձյալ Տիրոջից էի առաջնորդություն ստացել, որ արձակուրդս անցկացնեմ Բելգիայում ու վերադառնամ հունվարի 17-ին: Վերադարձի տոմսերը նախապես գնել էի: Հունվարի 12-ին Մոսկվայի օդանավակայանում խառնաշփոթ իրավիճակ էր: Ձյան առատ տեղումների ու փոթորկի պատճառով թռիչքների մեծ մասը դադարեցրել էին: Ռուսական հեռուստաալիքները և «Եվրոնյուս»-ը անդադար կոչ էին անում «Ռուսական ավիատղիներ»-ով թռչել պատրաստ-

վող ուղևորներին՝ ետ տալ տոմսերը, հետաձգել թոփչքները, որպեսզի Մոսկվայի օդանավակայանում նոր անկառավարելի կուտակումներ չլինեն: Զգուշացնում էին, որ ձյան առատ տեղումներն ու փոթորիկն առաջիկա շաբաթվա ընթացքում չեն դադարի: Շարունակաբար ցուցադրում էին օդանավակայանի մեծաքանակ ուղևորների խառնաշփոթ վիճակը, դրսի փոթորիկն ու հասցրած վնասները: Ինձ շրջապատող մարդիկ, իմանալով, որ վերադարձիս տոմսը պատկանում է «Ռուսական ավիատոլիներ»-ին և հունվարի 17-ի համար է, առաջարկեցին այն շտապ ետ տալ ու սպասել կամ «Ավստրիական ավիատոլիներ»-ից նորը գնել: Ես առանձնացա իմ սենյակում և սկսեցի մտորել: Հիշեցի, որ իմ՝ Բելգիայում գտնվելն ու վերադարձի տոմսը գնելն Աստծո կամքի համաձայն են, հետևաբար Մոսկվայում սկսված փոթորիկն ու օդանավակայանում տիրող խառնաշփոթ վիճակն Աստծո կամքից դուրս են: Իմ ֆինանսներն ու վիզան հնարավորություն էին տալիս մնալու Բելգիայում ևս տասը օր և ավելի, բայց Տերը, մինչև Բելգիա մեկնելս, ինձ ասել էր, որ վերադառնամ հուն-

վարի 17-ին: Ինձ մնում էր միայն Հիսուս Քրիստոսի անունով հրամայել այս աշխարհի իշխանին՝ սատանային, դադարեցնելու ամեն խառնաշփոթու փոթորիկ: Ես նրան ասացի. «Սատանա՛, թեկուզ դու ես այս աշխարհի իշխանը, բայց ես քեզ հրամայում եմ իմ **Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի անունով**, հենց այսօր դադարեցրո՛ւ Մոսկվայի փոթորիկն ու օդանավակայանի խառնաշփոթ վիճակը»: Ես լավ էի հիշում Մարկոս 4-րդ գլխում նկարագրված պատմությունը, որտեղ նավի մեջ գտնվող աշակերտները խուճապի են մատնվում անսպասելի փոթորկի պատճառով: Տեսնելով, որ արդեն խորտակվում են՝ նրանք արթնացնում են նավի ետնամասում խաղաղ քնած Հիսուսին: Տերը զարմանում է՝ տեսնելով աշակերտներին այդ վիճակում, ու հրամայում է փոթորկին, որ հանդարտվի. «**Եվ այն օրը, երբ իրիկուն էր լինում, նրանց ասաց. «Եկեք անցնենք այն կողմը»:** Եվ ժողովրդին թողեցին ու Նրան նավի մեջ առան, և ուրիշ նավակներ էլ կային նրանց հետ: Եվ քամու մեծ փոթորիկ սկսվեց, ալիքները թափվում էին նավի մեջ, մինչև որ համարյա արդեն լցվում էր: Եվ Ինքը նավի ետևի

կողմում բարձի վրա քնած էր: Նրան զարթնեցնում են և ասում. «Վարդապետ, հոգդ չէ, որ կորչում ենք»: Եվ Նա զարթնելով՝ քամուն սաստեց և ասաց ծովին. «Լռի՛ր, պապանձվի՛ր»: Եվ քամին դադարեց, ու մեծ խաղաղություն եղավ: Եվ ասաց նրանց. «Ինչո՞ւ այդպես վախկոտ եք, ինչպե՞ս հավատք չունեք»: Եվ նրանք մեծ վախով վախեցան և իրար ասում էին. «Սա ո՞վ է, որ քամին էլ, ծովն էլ հնազանդվում են Նրան» (Մարկ. 4.35-40):

Ես համոզված էի, որ սատանան պիտի ենթարկվի իմ շուրթերից դուրս եկած խոսքին, որն իրեն հրամայված էր Հիսուս Քրիստոսի անվան իշխանությամբ: Այնուհետև աղոթեցի օղանավակայանի աշխատակազմի համար, որ կարողանան կարգավորել թռիչքները: Հաջորդ օրը բացարձակապես մոռացել էի փոթորկի մասին: «Սկայայ»-ով խոսում էի Մոսկվայում ապրող քրոջս հետ և նկատելով, որ նա շատ թեթև է հագնված, հարցրի եղանակի մասին: Քույրս ոգևորված պատմեց, որ մի գիշերվա ընթացքում դադարել են վնասներ պատճառող փոթորիկն ու անվերջանալի թվացող ձյան տեղումները, իսկ փողոցներում կուտակված

հսկայածավալ ճյունը շարունակում է հալվել: Ան-  
միջապես հիշեցի մեկ օր առաջ Հիսուս Քրիստոս-  
սի անվան իշխանությամբ իմ ջերմեռանդ աղոթ-  
քը: Երբ քրոջս պատմեցի դրա մասին, նա ասաց,  
որ հեռուստատեսությամբ հաղորդվող լուրերի  
համաձայն՝ անկառավարելի փոթորկի ու ձյան  
դադարը շատ անսպասելի էր, բայց ամեն պահի  
նոր փոթորիկ ու ձյան տեղատարափ է սպասվում:  
Ես նրան հանգստացրի և ասացի, որ դա անհնար  
է, քանի որ մեր Տերը հավատարիմ է, և Իր սկսած  
գործը հաղթական ավարտի է հասցնում:

Հունվարի 17-ին հանգիստ ու ապահով վերա-  
դարձա Երևան: Արդեն լուսաբաց էր, երբ տուն  
մտա: Ճամպրուկներս դրեցի միջանցքում ու աղո-  
թեցի. «Տէր, ես համոզված էի, որ Դու հաղթել  
ես սատանային ու խաչիդ գործությամբ ստացած  
հաղթանակդ ինձ ես նվիրել, ինչի համար երախ-  
տապարտ եմ Քեզ...»: Ինչ վերաբերում է Մոսկ-  
վայում սպասվելիք ձյանը, թող Տերը որոշեր, քա-  
նի որ ես չգիտեմ՝ միգուցե ինձ պես մեկն էլ էր  
աղաղակել Նրան՝ այդ ձյան տեղատարափը չշա-  
րունակվելու համար:

Աստծո Հոգին՝ Սուրբ Հոգին, Իր ամբողջ գործությամբ բնակվում է վերստին ծնունդ ստացած մարդու մեջ. **«Աստված չտվեց մեզ վախի հոգի, այլ՝ գործության, սիրո և զգոնության»** (Բ Տիմոթ. 1.7), **«... ավելի մեծ է Նա, որ ձեզանում է, քան թե նա, որ աշխարհի մեջ է»** (Ա Հովհ. 4.4): Պարզապես, յուրաքանչյուր մարդ պետք է հարգի ու մեծարի Սուրբ Հոգու ներկայությունը, որ իր մեջ է, և թույլ տա, որ Նա իր կյանքի բոլոր անհրաժեշտ բնագավառներում գործի ամբողջությամբ: Սուրբ Հոգին Իր ամբողջ գործությամբ գործում է մարդու կյանքում այն ժամանակ, երբ մարդը մշտապես շփվում է Նրա հետ: Ինչպես սպորտով զբաղվելը, մշտապես մարզադահլիճ հաճախելը և ճիշտ մարզչի ղեկավարությամբ մարզվելը կոփում են մարդու մարմինը, ձիգ ու պիրկ դարձնում մկանները, գեղեցիկ տեսք հաղորդում արտաքնին, նույն ձևով էլ Սուրբ Հոգով աղոթքն ու հավատքը կառուցում են վերստին ծնունդ ունեցողի անձը՝ ներսի մարդուն. **«Բայց դուք, սիրելիներ, ձեր անձերը ձեր սուրբ հավատքի վրա շինեք՝ Սուրբ Հոգով աղոթք անելով»** (Հուդա 20): **«Լեզվով խո-**

**սողը իր անձն է շինում, մարգարեացողը՝ եկեղեցին»** (Ա Կորնթ. 14.4): Երբ սատանան որոգայթներ է լարում մարդու անձի, կոչման և, ընդհանրապես, կյանքի նկատմամբ, Սուրբ Հոգու զորությամբ «կառուցված» ներսի մարդն անմիջապես հակահարված է տալիս նրան՝ շրջանցելով ամեն տեսակի վախ և, ընդհանրապես, սատանայի բոլոր որոգայթները: Սուրբ Հոգով աղոթքը, Սուրբ Հոգու պտուղները և պարզկները հրաշքներով են լցնում մարդու կյանքը, ու նրա ներսի մարդը լինում է համարձակ, Աստծուն վստահող և Աստծո փառքը տարածող:

Տերը մեզ տվել է զգոնության հոգի: Ինչ է նշանակում զգոն լինել. նախ և առաջ՝ ունենալ առողջ միտք: Միայն առողջ միտքը կարող է հսկել իրավիճակները և համապատասխան քայլեր կատարել: Ոմանք ասում են. «Մարդը պետք է ինչ-որ չափով վախի զգացում ունենա, որպեսզի զգույշ լինի: Վախից զուրկ մարդը կարող է հայտնվել ամենատարբեր վտանգավոր իրավիճակներում, նույնիսկ՝ մահանալ»: Սա նույնն է, թե ասել. «Թույնի փոքր քանակությունը չի սպանի մարդուն»: Վախը և



թույնը հավասարագոր են: Թույնը մարդուն ֆիզիկապես է սպանում, իսկ վախը սպանում է մարդու առաջընթաց տանող գործողությունները, կաթվածահար անում նրա միտքը, զրկում նրան երազելու և երազանքներն իրագործելու հնարավորություններից, կարելի է ասել՝ վախը դանդաղ է սպանում: Մարդուն վտանգից պահպանում է ոչ թե վախը, այլ առողջ և զգոն միտքը:

Վախը նույնպես հավատք է: Մարդը փորձում է նոր կյանք սկսել, մի նոր բանի սկիզբ դնել, բայց վախը նրա առջև բերում է նախկին պարտությունները. «Հանկարծ չփորձես, հիշում ես, թե ինչ եղավ...», երբեմն էլ ներկայացնում է հարևանի անհաջող կյանքից դրվագների մի երկար շարք: Յուրաքանչյուրը պիտի ուշադիր լինի՝ ինչ է խոսում, ինչպիսի արտահայտություններ են դուրս գալիս իր շուրթերից, ինչպիսի մտքեր ունի՝ կառուցող, առաջընթաց ապահովող, թե՛ գորշ, միապաղաղ կյանքի մեջ պահող: Մենք պիտի զգոն լինենք՝ ո՞ւմ ենք լսում, ի՞նչ ենք լսում, ինչպիսի հաղորդումներ ու ֆիլմեր ենք դիտում, ինչպիսի մարդկանց հետ ենք շփվում:

Ոչ զգոն վիճակը մարդուն զրկում է ինքնավստահության զգացումից: Յուրաքանչյուր ոք, ով ինքնավստահ չէ, բնականաբար, վախենում է մարդկանց կարծիքից, ղեկավարներից, հասարակության առջև հանդես գալուց: Թերաթերության զգացումը կարող է ունենալ տարբեր պատճառներ: Օրինակ՝ արտաքին տեսքը, սոցիալական վիճակը, բնակատեղը, ծնողների կարգավիճակը, կրթության մակարդակը և այլն: Այս ամենը մարդու կյանքում ծնում են սահմանափակումներ, բարդույթներ: Սակայն իրականությունից չպետք է փախչել: Շատ կարևոր է, որ մարդն ինքն իր հետ մշտապես անկեղծ լինի և համարձակ խոստովանի իր անինքնավստահության պատճառը: Օրինակ՝ եթե մեկի համար անինքնավստահության պատճառ է գյուղում ծնված լինելը, նա պարզապես կարող է մտածել. այո՛, ես ծնվել եմ գյուղում և հիմա ապրում եմ քաղաքում՝ վարձակալված բնակարանում, ի տարբերություն իմ ընկերների, ովքեր ծնվել են մայրաքաղաքում և ունեն շքեղ կահավորված բնակարաններ:

Կյանքում ամեն ինչ հարաբերական է. այդ նույն մարդիկ, ովքեր ծնվել են տնտեսապես համեմատաբար ոչ զարգացած երկրի մայրաքաղաքում և ապրում են շքեղ կահավորված բնակարաններում, կարող են հայտնվել նմանատիպ կարգավիճակում, երբ Լոնդոնում կամ Փնևում ուսանեն, և նրանց ուսանողական ընկերները լինեն Եվրոպայի զարգացած երկրներից կամ Ամերիկայի Միացյալ Նահանգներից: Ինքնավստահության բացակայության դեպքում նրանք նույնպես բարդությոներ կունենան:

Մեկ այլ անձնավորության համար անհնքնավստահության պատճառ կարող է լինել այն փաստը, որ իր մայրը բանվորուհի է, իսկ հայրը՝ հարբեցող: Աշխատավայրում, ուսումնական հաստատությունում կամ մեկ այլ միջավայրում նրան թվում է, թե բոլորը գիտեն դրա մասին, և նա, բարդություններից դրդված, կամ մի գեղեցիկ պատմություն է հորինում իր ծնողների կրթված ու բարձր խավից լինելու մասին, կամ մեկուսանում բոլորից:

Իսնդիբը հարուստ կամ աղքատ, գեղեցիկ կամ տղեղ, քաղաքացի կամ գյուղացի, տնտեսապես

զարգացած կամ աղքատ տնտեսություն ունեցող երկրի ծնունդ լինելը չէ: Խնդիրն ինքնավստահության բացակայությունն է: Եվ զգոնության հոգին սովորեցնում է, որ ինքնավստահ լինելու համար մարդը չպետք է կենտրոնանա՝ թե ինչ չունի, այլ, ընդհակառակը, պետք է գնահատի այն լավագույնը, ինչ ունի, և դրա համար շնորհակալ լինի Աստծուց: Ինչ վերաբերում է այն ամենին, ինչ բացակայում է նրա կյանքից, ողբերգություն չէ. անհրաժեշտ է միայն լինել զգոն, ունենալ ճիշտ արժեհամակարգ: Ամեն բան հնարավոր է շտկել և ձեռք բերել՝ ձգտելով զարգացման ու դրսևորելով ճիշտ բնավորություն:

Զգոնության հոգուն տեղ չտալու պատճառով մարդը կարող է անվերջ կատարելագործվել՝ մտածելով, որ դեռ ժամանակը չէ նոր գործ սկսելու: Քողարկված, ծածուկ վախը նրան անընդհատ ետ է պահում նորի մեջ մտնելու հնարավորությունից: Եվ պատահում է անխուսափելի՝ հայտնվում է թերի կրթություն ստացած մեկը, ով պարզապես համարձակ է և ինքնավստահ, ու սկսում է այն գործը, որի համար մեկ այլ անձնավորություն շարունակաբար կրթվում է՝ առանց

գիտակցելու, որ քողարկված վախն իրեն դարձրել է «փիլիսոփա», «գիտունիկ», այնինչ զգոնության հոգով առաջնորդվելով՝ նա վաղուց նոր քայլեր կաներ: Այս դեպքում կշահեին և՛ ինքը, և՛ հասարակությունը, քանի որ գործ կունենային խելացի, կրթված, զգոնության հոգով առաջնորդվող անձնավորության հետ: Մինչդեռ մյուս անձնավորությունը՝ թերի կրթությամբ և ավելորդ ինքնավստահությամբ, ստեղծում է մի միջակայություն ու համոզում մարդկանց, որ դա գլուխգործոց է, ինքնատիպ երևույթ: Այս դեպքում տուժում է հասարակության այն հատվածը, ով հավատում է այդ «գլուխգործոցին»: Տեսնելով թերի կրթվածի հաջողությունը՝ առաջին անձնավորությունը կամ վիրավորվում է ու ընդհանրապես դուրս գալիս տեսադաշտից, կամ էլ տեղ տալիս զգոնության հոգուն և մտնում իր կոչման մեջ:

Երանի՜ մարդիկ պատկերացնեին, թե ինչպիսի հաջողություններից ու հաճույքներից են զրկվում վախի պատճառով...

Սատանայի ներշնչած հավատքը՝ վախը, և ճշմարիտ հավատքը՝ վստահությունն առ Աստված, անհամատեղելի են: Մարդը պիտի ընտրի

և որոշում կայացնի, թե ում հետ է ցանկանում ապրել այս երկրի վրա՝ վախի՛, ով սարսափով է լցնում վաղվա օրվա նկատմամբ, ետ պահում նորը սկսելուց, դրական փոփոխություններից, ստիպում կուչ գալ մի անկյունում և ապրել միօրինակ, տաղտկալի կյանքով, թե՛ անվախության, խիզախության, որ ամեն օր մարտահրավեր են նետում, սովորեցնում ամեն պահի ապավինել Աստծուն, կարելի է ասել՝ քայլել ջրի վրայով, միայն այն քանի համար, որ Հիսուսն է ասել՝ ե՛կ:

Սուրբ Հոգին ազատագրող զորություն ունի: Պարզապես, մարդը պիտի որոշում կայացնի՝ ես ոչնչից չեմ վախենում, քանի որ իմ Տերը՝ տիեզերքի Արարիչն ու հավիտենությունն ափերի մեջ Պահողը, ասում է. **«Մի՛ վախեցիր, որովհետև ես քեզ փրկել եմ, քո անունով կանչել եմ, թե դու իմն ես: Երբ ջրերից անցնես, ես քեզ հետ եմ, և եթե գետերով՝ նրանք քեզ չեն ողողի: Երբ գնաս կրակի միջով, չես այրվի, և բոցը քեզ չպիտի վառի, որովհետև ես՝ Տերս, քո Աստվածն եմ, Իսրայելի Սուրբս՝ քո փրկիչն եմ»** (Եսայի 43.1-3):

Աստծո պատկերով և նմանությամբ ստեղծված մարդը, ով Հիսուս Քրիստոսին իր կյանքի

Տեր ու Փրկիչ է ընդունել, պիտի վստահի Աստ-  
ծուն: Նա իր կյանքում զարգացում բերող ցանկա-  
ցած գործողությունից առաջ պիտի առանձնանա  
ծածուկ սենյակում, խոսի Տիրոջ հետ, Խոսք ստա-  
նա Սուրբ Հոգուց, հետո միայն համարձակորեն  
ձեռնարկի տվյալ գաղափարը: Մարդը, եթե Աստ-  
ծուց Խոսք չի ստացել, պետք է կանգ առնի ու  
փնտրի Տիրոջ երեսը՝ իմանալու համար, թե Տերն  
ինչ է ուզում իրենից: Այս դեպքում կանգ առնելու  
պատճառը ոչ թե վախն է, այլ Տիրոջ կամքն իմա-  
նալու ցանկությունը: Եթե Տերը Խոսք է տվել,  
պետք է համարձակ սկսել՝ հավատալով, որ  
դժվարությունների դեպքում Նա հավատարիմ է:

## Ի՞նչ է սՊԱՍՎՈՒՄ ԱՅՆ ՄԱՐԴՈՒՆ, ՈՎ ՉԻ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՀԱՂԹԵԼ ՎԱՆԸ

**Մ**արդիկ երբեմն մտածում են՝ ի՞նչ պարտադիր է, որ այս պարագայում հաղթող լինեմ. այնքան թերություններ ու պակասություններ կան իմ կյանքում և, ընդհանրապես, շրջապատում, թող այդ «վախ» կոչվածն էլ լինի դրանցից մեկը: Ընտրությունը տվյալ մարդունն է: Ոչ ոք իրավունք չունի բռնությամբ փոխելու նրա կարծիքը: ԻՆդիհորը մեկ այլ փաստի առկայությունն է՝ վախը նույնպես հավատք է: Այդ հավատքը կարող է այնքան զորավոր լինել, որ իրականություն դառնա: Մատթեոս 8.13-ում Հիսուսն ասում է. **«Գնա՛, և ինչպես որ հավատացիր, այնպես թող լինի քեզ»:** Հիսուսը մարդկանց կյանքում հրաշք անելիս համարյա միշտ ասում էր. «Քո հավատքն ապրեցրեց քեզ...», «Թող քո հավատքով լինի...»: Հորը ողբում էր. **«Որովհետև այն երկյուղալի բանից, որ վախենում էի, ինձ հանդիպեց, և ինչից որ սարսա-**



փում էի, հասավ ինձ: Ո՛չ խաղաղություն ունեմ, ո՛չ հանգստություն, և ո՛չ հանդարտություն, ու վրդովմունքն է եկել» (Հոր 3.25,26): Մարդը չպետք է վախենա ոչ մի երկյուղալի բանից, այլ պետք է ապավինի Աստծո Խոսքին. **«Ո՛չ ուժով, ո՛չ զորությունով, այլ Իմ Հոգով,- ասում է Զորաց Տերը»** (Զաքարիա 4.6): Նա պետք է աղոթի և Սուրբ Հոգով առաջնորդվի: Սուրբ Հոգու առաջնորդությամբ՝ նա աստիճանաբար, քայլ առ քայլ Աստծո խաղաղության մեջ կհասնի հաղթանակի: Կարևորը ցանկությունն է, մեծ ցանկությունը: Հնարավոր է՝ մարդու մեջ այդ ցանկությունն այնքան մեծ չէ, որ նրան մղի՝ վախից ազատվելու: Աստվածաշունչն ունի ճանապարհ. **«Որովհետև Աստված է, որ ներգործում է ձեզանում՝ կամենալն էլ, անելն էլ Իր հաճության պես»** (Փիլիպ. 2.13): Տերն է տալիս ցանկությունը, պարզապես պետք է աղաղակել Նրան, աղոթել, որ Նա այդ մեծ ցանկությունը տա: Ամեն ինչ Տիրոջ ձեռքերում է, պարզապես մարդը պետք է քայլ անի դեպի Տերը. երբ նա քայլ է անում, Տերն ընդառաջ է գալիս. **«Մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ: ...Խոնարհվե՛ք Տիրոջ առջև, և Նա կբարձրացնի ձեզ»** (Հակոբ. 4. 8-10):

## ԻՆՉՊԻՍԻ՞ ՎԱՐՔԱԳԻԾ ԿԱՐԵԼԻ Է ԴՐՍԵՎՈՐԵԼ ԱՄԵՆԱՏԱՐՔԵՐ ՎԱՆԵՐԻՑ ԱԶԱՏԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

**Ե**ս արդեն նշեցի, որ բոլոր տեսակի վախերի դեպքում, համաձայն Աստծո Խոսքի, անհրաժեշտ է.

- Հիշել, որ Աստված մարդուն ստեղծելիս չի տվել վախի զգացում: Վախը հոգի է, որը մարդուն ուղեկցում է այնքան ժամանակ, քանի դեռ Աստված նրա կյանքի հիմքը չէ:
- Երբեք չմոռանալ, որ Աստված վախի փոխարեն մարդուն պարզևել է սիրո, զորության ու զգոնության հոգի: Պարզապես, անհրաժեշտ է ճիշտ ընտրություն կատարել և կողմնորոշվել, թե կյանքի տարբեր իրավիճակներում ինչպես պետք է առաջնորդվել՝ սիրով, զորությամբ, թե՛ զգոնությամբ:

- Հիշել, որ Աստված սեր է, ամենակարող, և եթե Նա տվյալ իրավիճակում քո կողքին է, ղվ կարող է քեզ հակառակ կանգնել. **«... եթե Աստված մեր կողմն է, ղվ է մեզ հակառակ»** (Հռոմ. 8.31):

Մարդը չպետք է կենտրոնանա սեփական անձի վրա կամ վախենա ծիծաղելի իրավիճակում հայտնվելուց: Կա այսպիսի արտահայտություն. «Լողալը ջրում են սովորում»: Մարդիկ, ձգտելով կատարելության, կորցնում են փուլ առ փուլ, աստիճանաբար գործելու հնարավորությունը: Օրինակ՝ որևէ օտար լեզու են սովորում, բայց հարկ եղած դեպքում խուսափում են իրենց սովորածն օգտագործելուց՝ վախենալով, որ իրենց բռնապաշարը դեռևս հարուստ չէ կամ արտասանությունը մաքուր չէ: Այնինչ, ընդամենը պետք է հիշել, որ որևէ այլազգի փայլուն չի տիրապետում մեկ այլ ազգության մայրենի լեզվին, բայց խոսում է, քանի որ բարդույթներ չունի:

Կա վախի ևս մեկ տեսակ՝ մարդը վախենում է մեկ այլ մարդուց՝ իր ուսուցչից, ղեկավարից կամ որևէ հեղինակավոր անձնավորությունից:

Այս դեպքում խորհուրդ է տրվում պարզել վախի պատճառը:

Ուսուցչի նկատմամբ վախը գուցե պայմանավորված է բարձր մակարդակի գիտելիքներ դրսևորելու անկարողությամբ: Կան երեխաներ, ուսանողներ, ովքեր տանը հրաշալի տիրապետում են թեմային, սակայն ուսուցչի կամ այլ հեղինակավոր անձի ներկայությունը նրանց ուղեղում արգելակում է առաջացնում: Նրանք մի ակնթարթ ամեն ինչ մոռանում են: Այս դեպքում խորհուրդ է տրվում չլարվել, «թուլանալ», քանի որ մարմնի լարվածությունն ազդում է նաև ուղեղի վրա: Որքան ուղեղն ու զգայարանները հուզված ու անհանգստացած են, այնքան ուժգին է արտահայտվում ներքին լարվածությունը: Մարդը հուզվում ու անհանգստանում է այն ժամանակ, երբ ուշադրություն է դարձնում բացասական մտքերին, որոնք կարծես գոռում են՝ դու չես կարող, կտապալվես... Այս դեպքում անհրաժեշտ է «թուլանալ», բացարձակապես ուշադրություն չդարձնել բացասական մտքերին, «գոռոցներին», այլ հիշել, թե որքան հրաշալի ես տիրապետում թե-

մային: Մարդը չպետք է կարևորություն տա, թե ով կա դասարանում կամ լսարանում. նա պետք է կարևորի այն միտքը, որ ինքը հրաշալի է տիրապետում թեմային, և իր առջև մի գեղեցիկ հնարավորություն է՝ ներկայացնելու իր գիտելիքները:

Ղեկավարի կամ այլ հեղինակավոր անձանց նկատմամբ վախը կարող է բխել «ավելորդ» հարգանք ցուցաբերելու, դիմացիսին «գերմարդ» պատկերացնելու ցանկությունից, քանի որ կան ղեկավարներ, ովքեր չափազանց կարևորում են իրենց անձը և ուզում են վախ սփռել իրենց ենթակայության տակ գտնվողների վրա: Վախը կարող է բխել ճշմարտությունը չիմանալուց: Հայկական հայտնի առակ կա հիմար կկվի ու խորամանկ աղվեսի մասին. «Լինում է մի սար, էն սարում՝ մի ծառ, էն ծառում՝ փչակ, փչակում՝ մի բույն, բնում՝ երեք ձագ, ու վրեն կկուն...» («Չարի վերջը», Հ. Թումանյան): Մի գեղեցիկ օր աղվեսը հայտնվում է ու հոխորտում, թե դա իր ծառն է, կկուն ինչպե՞ս է համարձակվել բույն հյուսել այդ ծառի վրա: Եվ որպեսզի չգնա կացիկը բերի ու ծառը կտրի, պահանջում է, որ կկուն իր ձագերին

տա իրեն: Կլուն հավատում է ու հերթով ցած նետում իր ձագերին՝ որպես կերակուր ազահ աղվեսին: Առակագիրը կկվին հիմար ու անխելք է անվանում: Նույն հիմար վիճակում է հայտնվում այն մարդը, ով, առանց փաստերը ճշտելու, տրվում է դիմացինի հոխորտանքին ու խուճապահար կատարում նրա հրամանը՝ որքան էլ այն դաժան լինի իր նկատմամբ: Ես չեմ ժխտում՝ կարող են լինել դեպքեր, երբ հոխորտացողը, իրոք, տվյալ պահին ունի ուժ, հնարավորություններ, իշխանություն: Բայց չպետք է մոռանալ, որ հզորների Հզորը մեր արդար Թագավորն է՝ տիեզերքը ստեղծող ու մարդուն սիրող Աստված: Այդպիսի հոխորտացող անձնավորություն էր Գողիաթը, իշխանություն ունեցող մարդ էր Սավուղը: Սակայն ինչ տեղի ունեցավ նրանց հետ: Երբ մարդը Աստծո սրտի համեմատ է ապրում, Տերն է նրա փրկության ամբողջը և ամբարտավանների դատը կատարողը: Պարզապես, պետք է աղոթել ու Տիրոջից էլք խնդրել տվյալ իրավիճակից դուրս գալու համար: Տերը յուրաքանչյուր իրավիճակի համար ունի արտասովոր էլք: Չպետք է կորցնել խաղաղությունն ու տրվել վախի հոգուն:

Ղեկավարի կամ այլ հեղինակավոր անձանց նկատմամբ վախը կարող է առաջանալ նաև սիրո պակասի պատճառով, քանի որ **«Սիրո մեջ վախ չկա, այլ կատարյալ սերը հեռացնում է վախը»** (Ա Հովհ. 4.18): Հնարավոր չէ վախենալ մեկից, ում շատ ես սիրում: Երբեմն թվում է, թե տվյալ մարդը չափազանց սիրելի է: Սակայն պահը գալիս է, ու նա, գիտակցաբար կամ անգիտակցաբար, մի այնպիսի վերաբերմունք է դրսևորում կամ չարություն գործում իրեն սիրողի նկատմամբ, որ վերջինս շփոթվում է: Սիրող մարդու համար դա ճիշտ պահն է, որպեսզի իրեն ստուգի՝ շարունակում է սիրել, թե՛ վիրավորանքի, բարկության, ատելության զգացումները փոթորկել են իր սիրտն ու միտքը:

Վախը կարող է առաջանալ նաև գործին լավ չսիրապետելու կամ թերաբժեքության զգացում ունենալու պատճառով: Բոլոր դեպքերում վախի պատճառը վերլուծելն անհրաժեշտ է: Յուրաքանչյուրն իր ներքին մարդու հետ խնդիրն անկեղծ քննարկելուց ու պատճառը պարզելուց հետո կարող է համապատասխան քայլեր անել վախից ազատվելու համար:

Ինչպես նշեցի, վախերը շատ են, և ֆորիաների թիվն անցնում է հինգ հարյուրի սահմանը: Սատանան, վախ ներշնչելով, անվերջ տանջում է մարդուն. վախ՝ ուրիշի կարծիքից, ընդունված չլինելուց, ներկայից ու ապագայից, քաղաքական փոփոխություններից ու տնտեսական ճգնաժամերից, բնության արհավիրքներից ու պատերազմներից, անբուժելի հիվանդություններից ու մահից, սիրելի մարդուն կորցնելուց...

Ցանկացած վախից ազատվելու համար մեր հայացքը պետք է ուղղված լինի Հիսուս Քրիստոսին, Նրա Խոսքին: Պետրոսը, տեսնելով, թե ինչպես է Հիսուսը քայլում ջրի վրայով, ցանկացավ հետևել Նրան: Լսելով Հիսուսի կանչը՝ նա համարձակ դուրս եկավ նավից ու քայլեց ջրի վրայով: Դա հաջողվեց, քանի որ նրա հայացքը ուղղված էր Հիսուսին: Ծովը շարունակում էր ալեկոծվել: Մի պահ Պետրոսը հայացքը կտրեց Հիսուսից ու նայեց փոթորկին. **«Եվ Պետրոսը նավից իջնելով՝ ջրի վրայով գնաց, որ մոտենա Հիսուսին: Տեսնելով, որ քամին սաստիկ է՝ վախեցավ, և երբ սկսեց ընկղմվել, աղաղակեց. «Տէր,**



**փրկիր ինձ»:** Եվ շուտով Հիսուսն Իր ձեռքը մեկնեց, նրան բռնեց ու ասաց. **«Թերահավատ, ինչո՞ւ երկմտեցիր»** (Մատթ. 14.29,30): Պետրոսը կխորտակվեր, եթե ձեռքը չմեկներ Հիսուսին: Նույնը տեղի է ունենում ցանկացած մարդու հետ: Քանի դեռ մարդու հայացքն ուղղված է Աստծո Խոսքին, նա համարձակ քայլում է յուրաքանչյուր դժվար իրավիճակի վրայով ու հաղթում, բայց երբ իր ականջներն ու աչքերը բացում է ու սկսում լսել այն, ինչ բոլորն են լսում, տեսնել այն, ինչ բոլորն են տեսնում, նրա մտքերը փոթորկվում են վախերի հորձանքից, և այդ հեղեղն արդեն պատրաստ է կուլ տալու նրան:

Պողոսը բանտում էր: Նրան արդեն հայտնի էր իր դատավճիռը՝ մահ: Յուրաքանչյուր պահի կարող էին բացել բանտախցի դուռը և նրան տանել մահապատիժն իրականացնելու: Տիմոթեոսն ազատության մեջ էր: Հալածանքներն ու նեղությունները թափվել էին գլխին, վախի փոթորիկը խեղդում էր նրան: Նա գրում է բանտում գտնվող Պողոսին և խորհուրդ հայցում: Իր մահվան դատավճռին սպասող Պողոսը պատասխանում է.

**«Աստված չավեց մեզ վախի հոգի, այլ՝ զորության, սիրո և զգոնության» (Բ Տիմոթ. 1.7):** Պողոսը չէր վախենում նրանցից, ովքեր կարող էին մարմինն սպանել: **«Եվ մի՛ վախեցեք նրանցից, ովքեր մարմինն սպանում են, իսկ հոգին չեն կարող սպանել: Ավելի վախեցե՛ք Նրանից, որ կարող է հոգին էլ, մարմինն էլ կորցնել գեհենի մեջ: Չէ՞ որ երկու ճնճղուկ մեկ դանկի են ծախվում, և նրանցից մեկը չի ընկնի գետնին՝ առանց ձեր Հոր կամքի, իսկ ձեր գլխի բոլոր մազերն էլ հաշված են: Ուրեմն մի՛ վախեցեք, դուք ճնճղուկներից ավելի լավն եք: Այսպիսով՝ ով որ Ինձ մարդկանց առջև դավանի, Ես էլ նրան կդավանեմ Իմ Հոր առջև, որ Երկնքում է: Եվ ով որ Ինձ ուրանա մարդկանց առջև, Ես էլ նրան կուրանամ իմ Հոր առջև, որ Երկնքում է» (Մատթ. 10.28-33):** Աստծո երկյուղն ու Նրա Խոսքն օգնում էին Պողոսին՝ ապրելու խաղաղության ու Տիրոջ փառահեղ ներկայության մեջ: «Իմ ակնկալության և հույսի համեմատ ոչնչից չեմ ամաչի, այլ ամբողջ համարձակությամբ կգործեմ, որ, ինչպես ամեն ժամանակ, հիմա էլ Քրիստոսը փառավորվի իմ մարմնում՝ թե՛

կյանքով, և թե՛ մահով: Ինձ համար կյանքը Քրիստոսն է, և մեռնելը՝ շահ: Բայց եթե մարմնով ապրելն իմ գործին պտուղ է բերում, էլ չգիտեմ, թե որը ընտրեմ: Երկու կողմից էլ նեղ տեղում եմ՝ փափագելով դուրս գալ և Քրիստոսի հետ լինել, որը շատ ավելի լավ է, բայց մարմնում մնալն ավելի հարկավոր է ձեզ: Եվ հաստատ համոզված սա գիտեմ, որ կմնամ ձեզ հետ, որ դուք զարգանաք և ուրախ լինեք հավատքով» (Փիլիպ. 1.20-25): Երբ այս խոսքերը որպես հայտնություն մխրճվում են հոգու մեջ, մարդու կյանքում մահն այլևս խայթոց չունի, իսկ վախը՝ անելիք:

## Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ՎԱՆ՝ ԱՍԾՈՒՑ

**Մ**արդիկ հարցնում են. «Աստուց պե՞տք է վախենալ: Աստված պատժում է»:

**«Իմաստության սկիզբը Տիրոջ վախն է»**

(Առակ. 1.7): Իմաստուն է այն մարդը, ով Աստուց վախ ունի: Այս վախը «երկյուղ» ասվածի համարժեքն է, որը բուրբուրվին կապ չունի վախի հոգու հետ: Աստծո երկյուղը վախի հոգու հականիշն է: Վախի հոգին, ինչպես ցույց են տալիս կյանքում պատահած իրավիճակները, քանդում է, կաշկանդում, ետ պահում նորը սկսելու հնարավորությունից: Աստծո երկյուղը հակառակն է գործում: Աստուց երկյուղ ունեցողը, համաձայն Աստվածաշնչի, իմաստուն է:

Աստված սուրբ է, կատարյալ: Նա ատում է մեղքը: Մարդը, գտնվելով Տիրոջ ներկայության մեջ, հոգևոր աշխարհում տեսնում է Նրա

սրբությունը: Իզուր չէ, որ Եսայի մարգարեն գրում է. «... տեսա Տիրոջը բարձր և վերացած աթոռի վրա նստած, և Նրա քղանցքը լցրել էր տաճարը: Սերովբեները կանգնած էին Նրանից վերև, նրանցից ամեն մեկը վեց թև ուներ՝ երկուսով ծածկում էին իրենց երեսը, երկուսով ծածկում էին իրենց ոտքերը և երկուսով թռչում էին: Եվ մեկը կանչում էր մյուսին ու ասում. «Մնորբ, սնորբ, սնորբ է Ջորաց Տերը, ամբողջ երկիրը լիքն է Նրա փառքով»: Եվ դռան շեմքի հիմքերը երեքացին աղաղակողի ձայնից, և տունը ծխով լցվեց: Եվ ես ասացի՝ վայ ինձ, որովհետև կորած եմ, որովհետև ես պիղծ շրթունքով մարդ եմ և պիղծ շրթունքով մարդկանց մեջ եմ բնակվում, և իմ աչքերը տեսան Ջորաց Տեր Թագավորին» (Եսայի 6.1-5): Սուրբ Աստված այնքան է ատում մեղքը և այնքան է սիրում Իր պատկերով ու նմանությամբ ստեղծված մարդուն, որ Իր միածին Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, ուղարկեց երկիր՝ որպես ՓՐԿԻՉ: Նա եկավ մարդկային կերպարանքով, ապրեց մարդկանց մեջ և ցույց տվեց մեր երկնային Հոր կամքն ու անսահման սերը

մարդու նկատմամբ, այնուհետև մարդու գործած մեղքերի, նրան սատանայի անեծքից ու գերությանից ազատելու համար չարչարվեց, ծաղրվեց ու խաչվեց: Հիսուսն Աստծո Խոսքը հասցրեց մարդուն և Հորից խնդրեց, որ Սուրբ Հոգին ուղարկի, Ով մարդուն կօգնի քայլելու ճշմարտության ճանապարհով. **«Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, Ռրին Հայրը կուղարկի Իմ անունով, Նա ամեն բան կսովորեցնի ձեզ և կհիշեցնի ձեզ ամեն բան, որ ասացի: Խաղաղություն եմ թողնում ձեզ, Իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ: Ոչ թե՛ ինչպես աշխարհն է տալիս, Ես տալիս եմ ձեզ, որ ձեր սիրտը չխտովի ու չվախենա»** (Հովհ. 14.26,27):

Սուրբ Աստված մարդու համար ստեղծել է ամեն հնարավորություն, որպեսզի նա չտառապի ու չկործանվի: Ցավոք, ոչ բոլորն են դա հասկանում, գնահատում և դրանից օգտվում: Վերջին ժամանակներում մարդիկ ավելի չար են, եսասեր. **«...մարդիկ կլինեն ինքնասեր, արծաթասեր, ամբարտավան, հպարտ, հայհոյիչ, ծնողներին անհնազանդ, ապերախտ, անսուրբ, անգութ, անհաշտ, բանասարկու, անժուժկալ, դաժան, անբա-**

**րեսեր, մասնիչ, հանդուգն, գոռոզ, ավելի ցանկասեր, քան թե աստվածասեր»** (Բ Տիմոթ. 3.1-4): Նրանք ցանկանում են ապրել իրենց ուզած ձևով և, հանդուգն ու ամբարտավան բնավորություն դրսևորելով, մտածում են, թե ՀԶՈՐ ԱՍՏՎԱԾ, ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾ նման է Ձմեռ պապիկի. ինչ ուզեն, երբ ուզեն՝ կարող են պատվիրել ու ստանալ: Ամենաողբալին այն է, որ ոմանք էլ մտածում են. «Աստծուց շատ բան չեմ ուզում: Թո՛ղ առողջություն տա, մնացածը ես կանեմ»: Ուզում ես գոռալ. «Ողորմելի՛ մարդ, ուշադիր՛ նայիր շուրջդ. քանի՛ ու քանի՛ ֆիզիկապես առողջ մարդ ողբում է թմրանյութերի գերի դարձած իր զավակին փրկելու համար, քանի՛ ու քանի՛ ֆիզիկապես առողջ մարդ մոլորվել է նյութական ու հոգևոր աղքատության լաբիրինթոսում, քանի՛ ու քանի՛ ֆիզիկապես առողջ մարդ տառապում է չհասկացված լինելու բարդույթից... էլ ո՞րն ասեմ... ու դու մտածում ես, թե առողջություն ունենալով՝ կազատվե՞ն տերերի Տիրոջ կարիքն ունենալու անհրաժեշտությունից»: Մարդը միշտ էլ ողորմելի է, երբ չի հասկանում, որ Աստծուց ոչ միայն պիտի

խնդրի այն ամենը, ինչի կարիքն ունի, այլև պիտի հարցնի. «Արքաների ԱՐՔԱ՝ ուզում եմ ճանաչել ՔՈ ԿԱՄՔԸ. ինչ ես ուզում, որ անեմ ՔԵԶ համար...»: Մարդը ողորմելի վիճակում է, երբ, գտնվելով նեղ պայմաններում, սկսում է աղոթել, մոմ վառել եկեղեցում կամ իր տան «սրբի անկյունում»՝ մտածելով, թե ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾ արագ հայացքը կգամի իր խնդրի վրա և շուտափույթ լուծում կտա, որ հանկարծ մարդը չգայթակղվի, չհիասթափվի Իրենից ու չմտածի՝ բա ո՞ր է Աստված: ՍՈՒՐԲ ու ՀԶՈՐ ԱՍՏՎԱԾ կախված չէ մարդու խղճուկ ու եսակենտրոն կարծիքից: Նա **«ուղիղի հետ ուղիղ է և ծուռի հետ՝ ծուռ»** (Մաղմ. 18.26): Մարդը, Աստծո երկյուղ ունենալով, պիտի իրեն հաշիվ տա՝ մեղքերով հանդերձ կանգնում է սուրբ ու արդարադատ Աստծո առջև ու դեռ դատում է Նրան, որ իրեն չի փրկում նեղ վիճակից: Աստված ԱՐԴԱՐԱԴԱՏ է: Ո՛չ, Նա չի պատժում, այլ Նրա Խոսքն է դատում մարդուն: Աստվածաշունչն ասում է. **«Եվ Հիսուսն աղաղակում էր ու ասում. «Ինձ հավատացողը ոչ թե Ինձ է հավատում, այլ Ինձ ուղարկողին: Ինձ տեսնո-**



ըը Ինձ ուղարկողին է տեսնում: Ես այս աշխարհ եկա, որ Ինձ հավատացողը խավարի մեջ չմնա: Եվ եթե մեկն Իմ խոսքերը լսի ու չհավատա, Ես չեմ դատի նրան, որովհետև Ես չեկա, որ աշխարհին դատեմ, այլ՝ աշխարհին փրկեմ: Ինձ անարգողը և Իմ խոսքերը չընդունողը ունի իրեն դատողին. այն խոսքը, որ խոսեցի, կդատի նրան հետին օրը, որովհետև Ես Իմ անձից չխոսեցի: Ինձ ուղարկող Հայրը պատվիրեց, թե ինչ պիտի ասեմ և ինչ պիտի խոսեմ: Եվ գիտեմ, որ Նրա պատվիրանը կյանք է: Ուրեմն, ինչ որ Ես խոսում եմ, ինչպես Հայրն ասաց ինձ, այնպես եմ խոսում»» (Հովհ. 12.46-50):

Աստծո Խոսքը չկատարելն է դատում մարդուն: Մարդը պիտի երկյուղ ունենա Աստծո նկատմամբ, որ Աստծո բերանից դուրս եկած, Աստվածաշնչում գրված խոսքը կատարի: Դա կապահովի նրա կյանքը չարիքից: Ինչ է սպասվում, օրինակ, այն մարդուն, ով անվերջ քննադատում է ուրիշներին: Աստծո Խոսքն ասում է. **«Մի՛ դատեք, և չեք դատվի: Մի՛ դատապարտեք, և չեք դատապարտվի: Արձակե՛ք, և կարձակվեք»** (Ղուկ. 6.37):

Երբ մարդը դատում է ուրիշին, ոչ միայն հնձում է իր ցանածը, այսինքն՝ իրեն էլ ուրիշն է դատում, այլև կրկնում է այն բոլոր մարդկանց սխալները, որոնց ինքը դատապարտում էր: Երբ մարդը չարախոսում ու զրպարտում է մեկ այլ մարդու՝ ցանկանալով նրան հեռացնել տեսադաշտից, ինքն է ընկնում իր հյուսած ծուղակի մեջ, և, վաղ թե ուշ, ինքն է դուրս գալիս տեսադաշտից: Հիշենք, թե ինչպես էր Համանը զրպարտում թագավորի կյանքը փրկած Մուրթբեին, և Տերն ինչպես կառավարեց իրադրությունները, որ **«Համանին կախեցին այն փայտի վրա, որ նա պատրաստել էր Մուրթբեի համար»** (Եսթեր 7.10): Տերը հետևում է յուրաքանչյուր մարդու գործողություններին և հսկում, որ Իր Խոսքը կատարվի. **«Երկինքն ու երկիրը կանցնեն, բայց Իմ խոսքերը չեն անցնի»** (Մատթ. 24.35):

Աստծո Խոսքը չկատարելը, Նրա պատվիրաններին անհնազանդ լինելը մարդուն դուրս են բերում Տիրոջ ծածկոցից, Նրա պաշտպանությունից, ու մարդն ինքնաբերաբար հայտնվում է դժբախտության մեջ, որը երբեմն կարող է

ավարտվել մահով: Եվ մահը դեռ ավարտը չէ. մահը՝ հավիտենական կյանքը դժոխքում անցկացնելու սկիզբն է: Այս կյանքը ժամանակավոր է. հավիտենականն սկսվում է մահից հետո: Աստված անակնկալ չի պատրաստել, Նա Իր Խոսքում՝ Աստվածաշնչում խոսում է դրա մասին և ցույց տալիս, թե մարդն ինչպես պետք է ապրի, որ իր ժամանակավոր կյանքում չհայտնվի այս աշխարհի իշխանի՝ սատանայի գերության մեջ, և դեռ ավելին՝ հավիտենական կյանքն անցկացնի ամենակարող, ամենաողորմած, ամենաարդար Արքայի ու տերերի Տիրոջ հետ:

Աստված մարդուն ստեղծել է որպես երրորդություն՝ հոգի, շունչ, մարմին: Եվ մարդու երրորդության յուրաքանչյուր մասը կարիք ունի շփվելու, սնվելու և զարգանալու: Մարդու մարմինը սնվում է սննդամթերքով: Ճիշտ սննդամթերքը, մաքուր մթնոլորտը, սպորտը, ճիշտ մարզիչը, առողջապահական խորհուրդները նպաստում են առողջ մարմին ունենալուն: Մշակութային ճիշտ արժեքները, ճիշտ արվեստը, ճիշտ կրթությունը, անաղարտ բնությունը սնում ու զարգացնում են

մարդու շունչը: Ո՛րն է ճիշտը: Ճիշտն այն է, որը կառուցում է, բարություն և երջանկություն հաղորդում, նոր ու ավելի բարձր մակարդակի վրա բարձրացնում: Մարդու հոգին միայն Աստված կարող է սնել ու զարգացնել: Ցավոք, ոչ բոլորն են սա հասկանում, այդ պատճառով փորձում են իրենց հոգու քաղցը բավարարել այն ամենով, ինչն ի զորու է բավարարելու միայն շնչի քաղցն ու զարգացումը:

Քրիստոնեությունը կրոն չէ, ծեսերի ու սոսնակատարությունների շարք չէ: Քրիստոնեությունը գիտություն է՝ տիեզերքի ներսում ու դրսում ամեն ինչ Ստեղծողի մասին: Քրիստոնեությունը երկրպագություն է՝ ուղղված հավիտենական կյանքն Իր ափերի մեջ Պահողին: Քրիստոնեությունը ճանապարհ է՝ սատանայի գերությունից դուրս գալու և Աստծո կատարյալ կամքի մեջ ապրելու. **«Եվ Տիրոջ կամքն է՝ բարին, հաճելին, կատարյալը»** (Հռոմ. 12.2): Ահա թե ինչու է անհրաժեշտ մեր հոգին կերակրել՝ հաղորդակցվելով Աստծո հետ:

## Ի՞ՆՉ Է ՊԱՏԱՀՈՒՄ ԱՅՆ ՄԱՐԴՈՒՆ, ՈՎ ԱՍԾՈՒՑ ԵՐԿՅՈՒՂ ՈՒՆԻ ԵՎ ՎԱՆԻ ՀՈԳՈՒՆ ԱՍՈՒՄ Է՝ Ո՛Չ

Աստվածաշնչում մարդկանց մի հզոր բանակ կա, ովքեր իրենց շնորհված կյանքն ապրեցին՝ առաջնորդվելով Տիրոջ երկյուղով, և մշտապես անտեսեցին վախի հոգուն: Սուրբ Գիրքը ներկայացնում է նրանց անցած ճանապարհը և այն պտուղները, որոնք, որպես հավատարմության պարգև, նրանք ճաշակեցին հավատարիմների Հավատարիմից: Նույն Աստվածաշնչում քիչ չեն նաև այն մարդիկ, ովքեր Աստծուց ընտրվել էին մեծ, փառահեղ գործեր անելու համար, սակայն տրվեցին վախի հոգուն և ահավոր վախճան ունեցան: Կյանքը շարունակվում է, և հավատարիմների Հավատարիմը՝ մեր կենդանի Աստված, այսօր նույնպես կանչում է յուրաքանչյուր մարդու և յուրաքանչյուրին ասում. «Մի՛ վախեցիր, այլ միայն հավատա»: Այդ մարդկանցից մեկը դու ես,

մեկը՝ ես: Ուզում եմ պատմել, թե ինչ պատահեց իմ կյանքում, երբ վախի հոգուն ասացի՝ ո՛չ, իսկ Տիրոջ կանչին պատասխանեցի՝ այո՛:

Մինչև կանդրադառնամ անձնական կյանքիս վկայությանը՝ համառոտ ներկայացնեմ նախնիներին: Ինչ դեր է խաղացել նրանց վարքագիծն իրենց սերունդների կյանքում: Հայրական կողմս սերում է Աշտարակից, մայրական կողմս՝ Սասունից: Չեմ ցանկանում մանրամասն ներկայացնել իմ վիթխարի տոհմածառը, բայց ավելորդ չեմ համարում առանձնացնել պապիս հորը՝ Հակոբին, ով 19-րդ դարում միանալով ամերիկացի և ռուս բողոքական շարժման միսիոներներին՝ Ավետարանը տարածել է մուսուլմանական երկրներում: 20-րդ դարի սկզբին, երբ ձևավորվել է Ադրբեջանը՝ Բաքու մայրաքաղաքով, նա համարձակություն է ունեցել խորհրդային տարիներին մուսուլմանական երկրում շուրջ քսան տարի ապրել և քարոզել կենդանի Հիսուս Փրկչին: Եվ դա արել է այն դեպքում, երբ նույն ժամանակահատվածում նույնիսկ քրիստոնյա Հայաստանում և Ռուսաստանում էին ձերբակալում Ավետարա-

նը քարոզողներին: Մորական պապս՝ Ներսէն, ով 1915 թվականի եղեռնի մազապործներից էր, բնակություն հաստատելով Ուջանում, այնուհետև՝ Էջմիածնում, աշխատել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տաճարում՝ որպես հաշվապահ: Նրա աստվածապաշտության, ազնվության ու համարձակության մասին պատմությունները լեգենդի են նման, թեպետ ամբողջությամբ ճշմարտություն են: Նույնիսկ Մուշեղ Գալշոյանը Արևմտյան Հայաստանից գաղթածների մասին գրելիս մի առանձին պատմվածք է նվիրել պապիս՝ «Ներսէն» վերնագրով, որի հիման վրա հետագայում ֆիլմ է նկարահանվել: Պապիս դերը ցնցող նմանությամբ կատարել է Կարեն Զանիբեկյանը: Ցանկանում եմ առանձնացնել նաև հորս՝ Սուրենի համարձակ վարքագիծը: Նա Հայաստանում 20-րդ դարի 60-ական թվականներին սկսված քրիստոնեական նոր ալիքի՝ Սուրբ Հոգու թափման շրջանի առաջին քրիստոնյաներից է: Լինելով Խորհրդային Հայաստանի պետական գործիչ՝ հայրս չի ուրացել Հիսուս Փրկչին նույնիսկ այն ժամանակ, երբ ՊԱԿ-ի ոռու ներկայացուցիչներ

րը, նրան դուրս կանչելով իր առանձնասենյակից, սպառնացել են պաշտոնանկ անել ու Սիրիո արտաքսել: Նա չի վախեցել ո՛չ պաշտոնից զրկվելուց, ո՛չ բանտից, ո՛չ ութ երեխաներին առանց հոր թողնելուց: Նախնիներիս համարձակությունը, որ դրսևորվել է վախի հոգուն «ոչ» ասելու, Հիսուս Քրիստոսին որպես իրենց կյանքի Փրկիչ ընդունելու և Ավետարանի բարի լուրը ազգերին տարածելու մեջ, բնականաբար, իր հզոր ազդեցությունն է ունեցել նրանց սերունդների վրա:

Թեև պապերս ու ծնողներս եղել են ճշմարիտ աստվածապաշտներ, բայց դա նրանց չի փոխանցվել մեխանիկորեն՝ սերնդեսերունդ: Նրանցից յուրաքանչյուրը Աստծուն՝ Հիսուս Քրիստոսին, որպես իր կյանքի Տեր է ընդունել հասուն տարիքում: Հայրս, ունենալով հավատացյալ ծնողներ, ամենևին չի մտածել, որ ինքն էլ պետք է այցելի եկեղեցի, աղոթի, Աստվածաշունչ կարդա: Նա նույնիսկ չի էլ մտածել՝ իրո՞ք Աստված կա: Հայրս այնպես է խորասուզվել ուսման, իսկ հետագայում՝ աշխատանքի մեջ, որ նույնիսկ ժամանակ չի ունեցել մտորելու՝ այս կյանքից հետո



հավիտենական կյանք կամ, թե՛ ոչ: Մորս ծնողները նույնպես աստվածապաշտ են եղել: Մայրս, լինելով բարեկիրթ, խոնարհ հայուհի, երբեք չի մտածել Աստծուն նվիրվելու կամ հավիտենական կյանքի մասին: Երբ հայրս ու մայրս ամուսնացել են, չեն մտածել՝ ունենանք շատ երեխաներ և նրանց այնպես դաստիարակենք, որ հետագայում բոլորը ծառայեն կենդանի Աստծուն: Ամենևին: Նրանք, ամուսնանալով, երազել են ունենալ երկու երեխա, նրանց ճիշտ դաստիարակել, կրթության տալ, պիտանի մարդիկ դարձնել... Մայրս եղել է տնային տնտեսուհի, զբաղվել իմ ու եղբորս դաստիարակությամբ, իսկ հայրս միշտ բարձր պաշտոններ է զբաղեցրել և, ինչպես բոլոր հայ տղամարդիկ, ընտանիքի կառավարման ու նյութապես ապահովման ամբողջ պատասխանատվությունը վերցրել իր ուսերին: Կյանքի ընթացքում այնպես է ստացվել, որ հայրս ծանոթացել է մի մարդու հետ, ով ապագայում բախտորոշիչ դեր է ունեցել ծնողներիս ապաշխարության և Աստծուն ծառայելու գործում: Նրանց ապաշխարությունից հետո են ծնվել երկրորդ եղ-

բայրս և քույրերս: Մեր՝ ութ երեխաներիս կյանքը դարձյալ այնպես է դասավորվել, որ մեզնից ոչ ոք մեխանիկորեն չի ընդունել Հիսուսին որպես իր կյանքի Տեր ու Փրկիչ: Մայրս, 30 տարեկանում ճանաչելով ճշմարիտ Աստծուն, միշտ աղոթել է իր երեխաների պաշտպանության և ճշմարիտ Աստծուն նվիրվելու համար: Նա մեզ դաստիարակել է աստվածաշնչյան հոգով: Հայրս, ինչպես նշեցի, ֆինանսապես ապահովել է մեզ և մեծ ուշադրություն դարձրել յուրաքանչյուրիս կրթությանը: Նա հաճախ էր ինձ ասում. «Ուշադիր եղիր փոքր քույրերիդ ու եղբորդ նկատմամբ, նրանք բոլորը պետք է բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթվեն»: Նա չէր բավարարվում միջնակարգ դպրոցի կրթության մակարդակով, այդ պատճառով դասախոսներ էր վարձել լրացուցիչ պարապմունքների համար, քանի որ իր յուրաքանչյուր երեխայի համար մեծ նպատակներ ուներ. երկու քույրերս ճարտարապետներ պիտի դառնային, փոքր եղբայրս ու քույրս՝ բժիշկներ.... Հետաքրքիրն այն է, որ հայրս թեպետ 35 տարեկանում Աստծուն իր կյանքի Փրկիչ

էր ընդունել, եկեղեցի էր հաճախում և այնպիսի հավատք ուներ, որ նույնիսկ ՊԱԿ-ի աշխատակիցները չէին կարողացել նրան հեռացնել հավատքից, այնուամենայնիվ, իր երեխաներից ոչ մեկին չէր պարտադրում՝ եկեղեցի գնալ, Աստծուն նվիրվել... Նա մտածում էր, որ յուրաքանչյուրս մեր գիտակցական կյանքում պիտի կողմնորոշվենք՝ հավատամք Աստծուն, Աստվածաշունչը մեր կյանքի ուղեցույց դարձնենք, թե՛ ոչ: Աստվածաշնչյան հոգով դաստիարակությունը, պապերիս ու ծնողներիս աղոթքները և ազատ ընտրություն կատարելու հնարավորությունը հիմք հանդիսացան, որ մենք գիտակցական կյանքում ճաշակենք աշխարհի «համը», ունենանք հաջողություններ ուսման, աշխատանքի բնագավառներում և ընտրենք հզորների Հզորին՝ Հիսուս Քրիստոսին որպես մեր կյանքի Տեր ու Փրկիչ: Մեր ընտանիքի ութ երեխաներից յուրաքանչյուրն Աստծո ճանաչելիության և նվիրման իր ճանապարհն է անցել: Յուրաքանչյուրը, ունենալով հաջողություններ աշխարհում, չի վախեցել այդ ամենը զոհաբերել միմիայն Աստծուն ծառայելու համար: Եվ նրան-

ցից յուրաքանչյուրի գոհը, վախի հոգուն մերժելը, սիրո, գորության ու զգոնության հոգով շարժվելը պարզևել է անպատմելի, սքանչելի պտուղներ: Դրա մասին գուցե նրանցից յուրաքանչյուրը մի օր կգրի: Ես իմ անճնական վկայություններով եմ ուզում ցույց տալ, թե ինչ է պատահում այն մարդուն, ով մերժում է վախի հոգուն և «այո» է ասում տերերի Տիրոջը՝ դառնալով Նրա Հարս եկեղեցու մի մասնիկը:

Ինչպես նշեցի, ծնողներս աստվածապաշտ մարդիկ էին: Հայրս ծառայում էր Հոգեգալստական եկեղեցում: Մինչև կենսաթոշակի անցնելը, նա միշտ աշխատել է պետական կառույցներում և բարձր պաշտոններ զբաղեցրել: Ի պաշտոնե՝ նա որոշակի «հնարավորություններ» ուներ մարդկանց «լավություն» անելու և սրտերը շահելու: Համենայն դեպս, այդպես էին կարծում իմ ուսուցիչները: Դպրոցում սովորելու տարիներին (անցյալ դարի 80-ական թվականներին) արդեն բարձր դասարաններում նկատում էի, որ այն աշակերտները, որոնց ծնողներն աշխատում էին խանութում, հիվանդանոցում կամ կարևոր նշանակությո-

յուն ունեցող որևէ կառույցում, առավելություններ ունեին: Նրանց ծնողները հաճախ էին այցելում դպրոց՝ տարբեր չափսերի փաթեթներով ու ծաղկեփնջերով: Ի զարմանս ինձ՝ նույնիսկ քիմիայի կամ ֆիզիկայի ժամերին ուսուցիչները կարող էին ընդհատել դասը և, դիմելով այս կամ այն աշակերտին, բարձրաձայնել իրենց կենցաղային կարիքները, օրինակ՝ դիմելով այն աշակերտին, ում մայրը մթերային խանութում վաճառողուհի էր, տեղեկացնել, որ իրենց տղայի ծննդյան կապակցությամբ ինչ-որ քանակությամբ երշիկ է հարկավոր, կամ՝ դիմելով մեկ այլ աշակերտի, ում հայրը շինանյութի խանութում պահեստապետ էր, մտահոգ ճայնով տեղեկացնել իրենց տան վերանորոգման աշխատանքների մասին և ցանկություն հայտնել հանդիպելու նրա հորը: Ես բնույթով թեև շատ համարձակ էի, բայց նաև ամաչկոտ էի: Ուսուցիչներիս նմանատիպ վարքից անմիջապես կարմրում էի: Ինձ համար ուսուցիչը երկնային արարած էր. նրանց հետ խոսելիս միշտ պատկանասք էի զգում: Դպրոցական տարիներին երբեք գերազանցիկ չեմ եղել: Բացի հանրահաշվից ու

ռուսերենից, մյուս բոլոր առարկաներից գերազանց գնահատական ստանալը խնդիր չէր ինձ համար: Ես աշխատասեր էի և, հիմնականում, լռակյաց: Դպրոցում շատ քիչ էի խոսում: Նույնիսկ մեր քիմիայի ուսուցիչը վերջին զանգի ժամանակ դպրոցական վերնաշապիկիս վրա գրել էր. «Սուսիկ-փուսիկ Գայանե ջան...»: Այդուհանդերձ, դպրոցի վերջին դասարաններում սովորելը տառապանք էր ինձ համար: Շատ հաճախ էին անարդար վարվում ինձ հետ, ցածր գնահատականներ դնում՝ հաշվի առնելով, որ հավատացյալների ընտանիքից եմ (այդ ժամանակ դա ամոթ էր համարվում): Նման վերաբերմունքի պատճառը նաև այն հանգամանքն էր, որ հայրս, զբաղեցնելով «յուդոտ» պաշտոն (քիչ բան չէր բնակչահագործման բաժնի պետ լինելը, այսինքն՝ մեկը, ով կարող էր բնակարաններով ապահովել մարդկանց), չէր մտածում իրենց ապահովել բնակարաններով կամ այլ «լավություն» անել: Հորս մտքով նույնիսկ չէր անցնում՝ իր պաշտոնը ծառայեցնել դպրոցիս, «լավ նայել» ուսուցիչներիս, տնօրինությանը, որպեսզի իմ նկատմամբ արդար

վերաբերմունք ցուցաբերեին: Լինելով ճշմարիտ աստվածապաշտ՝ հայրս խարդախություն կամ որևէ կեղծիք թույլ չէր տա, ով էլ դա պահանջեր: Եվ այսպես, ես դպրոցն ավարտեցի և, ստանալով ավարտական վկայական, երկար ժամանակ ուշքի չէի գալիս: Վկայականում վեց առարկայից միջակ գնահատական էին նշանակել: Եվ դա այն դեպքում, երբ ես նույնիսկ «4» չէի ստացել: Ես ոչ որի չէի կարող բողոքել: Ուսուցիչներիցս մի քանիսը չարախինդ հայացքով հետևում էին արձագանքիս: Ես իմ կյանքում մի որոշում ունեմ՝ երբ քեզ տրորում են և փորձում ոչնչացնել, մի պատասխանիր, մի կողմ քաշվիր, որպեսզի ոտնատակ չլինես, դատող տո՛ւր Աստծուն ու սովերում շարունակիր գորանալ: Թո՛ղ գորությանդ աղբյուրը միշտ Աստված լինի. օրը կգա, ու կտեսնես Աստծո գործողությունները թե՛ քո, թե՛ քեզ հալածողների կյանքում: Այս որոշումը կայացրել եմ հասուն տարիքում, որոշակի փորձառությունից հետո: Իսկ այն ժամանակ, երբ ընդամենը 17 տարեկան էի, անպաշտպան և Աստծուն այնպես չէի ճանաչում, ինչպես հարկն էր, որոշեցի վրեժ լուծել: Այդ տա-

րիներին հասակակիցներիցս շատերն էին կար-  
դում Ալեքսանդր Դյումայի «Կոմս Մոնտե Բրիս-  
տո» գիրքը և ոգեշնչվում: Ես բացառություն չէի.  
ոգեշնչված լինելով այդ գրքի գաղափարներով՝  
արդարությունը վրեժի միջոցով հաղթանակած  
տեսնելու փափագով, որոշեցի ընդունվել պետա-  
կան համալսարան, դառնալ լրագրող և մուտք  
գործել դպրոց որպես լրագրող-դատավոր՝ դպրո-  
ցի տնօրինության և իմ վեց ուսուցիչների դիմակ-  
ները պատռելու համար: Առանց որևէ դասախոսի  
մոտ լրացուցիչ պարապելու, բացառապես Աստծո  
շնորհած հաջողությամբ՝ ես ոչ միայն ընդունվեցի  
պետական համալսարանի բանասիրության բա-  
ժինը, այլև հնարավորություն ստացա դառնալու  
Հեռուստառադիոպետկոմի մեծ լսարան ունեցող  
մի քանի հաղորդաշարերի թղթակիցը: Անմիջա-  
պես ուղևորվեցի իմ դպրոց՝ իրականացնելու վա-  
ղեմի երազանքս: Դպրոցի տնօրինությունը լա-  
վատեղյակ էր իմ հաջողություններին: Նրանք  
ցնցված էին, երբեք չէին պատկերացնի, որ ինձ  
նման «սուսիկ-փուսիկ աղջնակը», ով հավատաց-  
յալների բազմազավակ ընտանիքից էր, առանց



դասախոսների մոտ լրացուցիչ պարապելու, իրենց նվիրած գնահատականներով, կկարողանար ընդունվել պետական համալսարան: Դպրոցի ուսմասվարի ուղեկցությամբ, ձայնագրման սարքավորումներով հանդերձ, մտա տնօրենի սենյակ: Ավելորդ է նկարագրել տնօրենի և ուսմասվարի հուզմունքը, կեղծ ժպիտը, շինծու և քաղքենի վերաբերմունքն իմ նկատմամբ: Նրանք այնպես էին իրենց պահում, որ քիչ էր մնում հավատայի, թե տարիներ շարունակ եղել եմ իրենց սիրելին և դպրոցի հպարտությունը: Դա նողկալի էր: Ես չեմ կարող ասել՝ իմ դեմքի արտահայտություննից էր, որ նրանք հանկարծ սկսեցին կակազելով խոսել ու աշնան տերևի նման դողալ: Դա մի քանի րոպե տևեց: Այդ րոպեների ընթացքում հասկացա, որ վրեժ լուծելուց բացի, ունեմ նաև ներելու հնարավորություն: Իմ քրիստոնեական դաստիարակությունը թույլ չտվեց հաղթողի դիրքից կանգնել տնօրենիս և ուսմասվարիս առջև ու չարախնդալ: Մեկ ակնթարթում ներեցի բոլորին և որոշումս փոխեցի: Արագ հավաքեցի ձայնագրման սարքավորումները և ասացի, որ

ցանկանում եմ իմ դպրոցի և լավագույն ուսուցիչներից մեկի մասին հաղորդում պատրաստել: Չեմ ուզում նկարագրել ո՛չ նրանց թերահավատությունն իմ ասածի հանդեպ, ո՛չ շփոթությունը, ո՛չ էլ ուրախությունն ու օգնելու պատրաստակամությունը... Նրանց խնդրեցի առանձին հանդիպում կազմակերպել իմ նախընտրած ուսուցչուհու հետ, ով ինձ երբեք չէր դասավանդել, բայց լավատեղյակ էի, թե նա որքան արդարամիտ էր ու աշակերտների կողմից սիրված: Մի քանի օր հետո իմ դպրոցը լավագույն տեսանկյունից ներկայացնող հաղորդումը եթեր հեռարձակվեց:

Միայն Աստված գիտի, թե որքան եմ տառապել ուսուցիչներիս անարդար վերաբերմունքի ու վկայականում վեց առարկայից «Յ» թվանշան ունենալու պատճառով: Դպրոցն ավարտելուց հետո՝ առաջին իսկ տարին, երբ փաստաթղթերս ներկայացրի համալսարան, ընդունող հանձնաժողովի անդամներից մեկը, բացելով վկայականս, արհամարհանքով տեղեկացրեց, որ ինձ նման դիմորդները, ովքեր այդքան «Յ»-ներ ունեն, դիմում են ՊՏՈՒ: Այդ ՊՏՈՒ ասվածը հա-

սարակության մեծ մասի կողմից չգնահատված ուսումնարան էր, որտեղ սովորում էին դպրոցում ցածր առաջադիմություն ունեցող ուսանողները: Անտեղի էր հանձնաժողովի անդամին բացատրել, որ «Յ»-ները ինձ և ծնողներիս «դաս տալու համար» են հայտնվել իմ վկայականում. դրանք իրականությանը չեն համապատասխանում:

Չկարողանալով հանձնել ընդունելության քննությունները՝ ես ուղևորվեցի ՊՏՈՒ: Երևանի Վարդաշեն թաղամասում մի ուսումնարան կար, որտեղ իմ հասակակից աղջիկները կար ու ձև էին սովորում: Դերձակ դառնալու նպատակ չունեի, պարզապես տեղեկացել էի, որ ցանկացած ՊՏՈՒ-ի կողմից շնորհված «կարմիր» դիպլոմը համալսարան ընդունվելիս հաշվի կառնվի, և վկայականի գնահատականները ստվերում կմնան: Ես ուսումնարանում սովորեցի բացարձակ գերազանց գնահատականներով. գերազանցիկ էի ոչ միայն տեսականից, այլև գործնական պարապմունքներից: Ի տարբերություն համակուրսեցիներիս՝ ես ոչ միայն սովորեցի կանացի հագուստների մոդելավորում, կար ու ձև, այլև

հրաշալի հագուստներ էի կարում տղամարդկանց համար: Նույնիսկ կազմակերպվեց իմ կարած հագուստների ու մոդելների ցուցադրությունը՝ Կրթության նախարարությունից եկած պատվիրակությանը ներկայացնելու համար: Ուսումնական տարվա վերջին ամիսն էր, երբ մեր խմբի ղեկավարն ինձ կանչեց իր առանձնասենյակ ու տեղեկացրեց, որ ուսումնարանը «կարմիր» դիպլոմ կարող է տալ միայն երեք ուսանողի: Եվ այդ երեք ուսանողները նրանք են, որոնց հայրերը համապատասխան գումար են առաջարկել ուսումնարանի տնօրինությանը, այլ խոսքով՝ կաշառել են վերադաս մարմիններին: Այնուհետև նա գովաբանեց իմ ընդունակությունները, ձեռքի շնորհքը, տաղանդը... Ես հավատում էի նրա անկեղծությանը. նա, իրոք, ինձ սիրում ու գնահատում էր, և եթե հնարավորություն ունենար, առաջինն ինձ կտար այդ բաղձալի «կարմիր» դիպլոմը: Անկեղծ ասած՝ այդ ամիսների ընթացքում ինչ որ սովորել էի, նրանից էի սովորել: Տեսնելով իմ ձգտումը՝ նա միշտ լրացուցիչ ժամանակ էր տրամադրում ինձ, որպեսզի վարպետանայի

այդ գործում: Ցավոք, համալսարանի ընդունելության քննություններին մասնակցելու համար չէի կարող փաստաթղթերն ընդունող հանձնաժողովին ներկայացնել մեր խմբի ղեկավարի նվիրվածությունն ու անկեղծությունը, իմ վարպետությունն ու ամբողջ տարվա ընթացքում վաստակած բացարձակ գերազանց գնահատականները: Վարպետս ասաց, որ ստիպված է իմ դիպլոմում «5»-երի կողքին գրնե մեկ «4» նկարել, որպեսզի արդարացվի իմ «կարմիր» դիպլոմ չստանալը: Նա նաև ավելացրեց, որ իմ բողոքներն անիմաստ կլինեն, քանի որ լսվում է նրա ձայնը, ով «կլորիկ գումար» է վճարում: Նա նույնիսկ զարմանք հայտնեց, որ իմ բարձրաստիճան պաշտոնյա հայրը գրնե մեկ անգամ չէկավ կամ չզանգահարեց ուսումնարանի տնօրինությանը:

Իմ վեց «3»-ներով զարդարված վկայականը և ուսումնարանի հասարակ դիպլոմը հիմք հանդիսացան, որ փաստաթղթերս նույնիսկ չընդունվեցին համալսարանի ընդունող հանձնաժողովի կողմից: Նրանք տեղեկացրին, որ այդպիսի վկայականի հետ պարտավոր եմ ներկայացնել նաև

ՊՏՈՒ-ի «կարմիր» դիպլոմ կամ, ամենաքիչը, վեց ամսվա բանվորական ստաժ: Ուսումնարանում գերազանց սովորելուն զուգահեռ ես գիշերցերեկ պարապում էի համալսարանի ընդունելության քննությունները բարձր գնահատականներով հանձնելու համար: Մինչդեռ, երբ օրը եկավ, նույնիսկ փաստաթղթերս չընդունվեցին: Ցանկացած տասնութ տարեկան աղջնակի համար դա, անկասկած, մեծ հարված կլիներ: Սակայն նույնիսկ այդ հարվածը չկարողացավ մտքիցս հանել համալսարան ընդունվելու ձգտումը: Եթե չլինեին վկայականիս կեղծ «3»-ները, ուսուցիչներիս անարգանքը, ՊՏՈՒ-ի տնօրենի կաշառակերության մարմաջը, երբեք չէի մտածի համալսարանի կամ լրագրող դառնալու մասին: ՊՏՈՒ-ի դիպլոմը ձեռքիս՝ քայլերս ուղղեցի «Գարուն» կարի արտադրամաս: Չեմ հիշում արտադրամասի ավելի ստույգ անվանումը (շատ տարիներ են անցել), բայց հրաշալի եմ հիշում իմ երկու հերթափոխով աշխատանքը. կամ լուսաբացին՝ մութուլույս, ճանապարհ էի ընկնում դեպի գործարան, քանի որ ժամը վեցից սկսվում էր ինձ համար տաժանակիր

աշխատանքը, կամ երկրորդ հերթափոխից հետո՝ կեսգիշերին, վերադառնում էի տուն: Աշխատանքը տաժանակիր էր ոչ այնքան իր ռոբոտային բնույթի պատճառով (կանացի հագուստների տարբեր մասեր էինք կարում՝ թև, գրպան, օձիք...), որքան աշխատող կանանց վարքի. նրանք միմյանց հետ հայիոյանքով էին խոսում, հատկապես նրանցից երկուսը, որ անվերջ մրցակցության մեջ էին, թե ով ավելի «շքեղ» կհայիոյի: Ես չգիտեմ՝ կգտնվե՞ր մի տղամարդ, ով այդ գործում կհաղթեր նրանց: Քանի որ բնավորությամբ լուռ էի, քչախոս, բնականաբար, իմ աշխատավայրում տեղի ունեցող իրադարձությունների մասին ոչ ոքի ոչինչ չէի պատմում: Իմ նպատակն էր՝ ձեռք բերել մեկ տարվա բանվորական ստաժ, որպեսզի իրավունք ունենայի մասնակցելու համալսարանի ընդունելության քննություններին: Կյանքիս այդ հատվածի ծանր պատմություններով չհոգնեցնելու համար անցնեմ իմ տերերի Տիրոջ ողորմության և սիրո դրսևորման պատմությանը:

Դպրոցական տարիներին, երբ ուսուցիչներս անարդար վերաբերմունք էին ցուցաբերում իմ

նկատմամբ, ես աղաղակում էի Աստծուն: Շատ էի աղոթում, Աստծուն էի դիմում ցանկացած խնդրի լուծման համար: Սակայն իմ աղոթքները, հիմնականում, անպատասխան էին մնում: Վերջին կաթիլը, որ համբերությանս բաժակը լցրեց, այն էր, որ երրորդ անգամ ԲՈՒՀ դիմելուց հետո, երբ արդեն նաև բանվորական ստաժ ունեի, դարձյալ չընդունվեցի: Պատճառն այն էր, որ չկարողացա չորս առարկայից «գերազանց» գնահատական ստանալ: Սա արդեն ինձ փշրեց ամբողջությամբ: Ես ընդամենը մի ելք ունեի՝ ընդունվել և աշխատել մի այնպիսի հաստատությունում, որտեղից կարելի էր մասնագիտական ստաժ ստանալ համալսարանի բանասիրության ֆակուլտետ մրցութից դուրս ընդունվելու համար: Սակայն դա իմ ուժերից վեր էր: Ոչ ոք օգնության ձեռք չէր մեկնում, քանի որ համոզվել էին, որ ես անհիմն եմ մեղադրել ուսուցիչներին: Մի կողմից էլ ուրախ էին, որ չեմ ընդունվում, որովհետև շատերի համար անվճար հագուստներ էի կարում: Իմ կյանքում մեկը մյուսին հաջորդող դառնություններն ու անպատասխան աղոթքներն ինձ համոզեցին,



որ Աստված գոյություն չունի: Նույնիսկ մորս հոր-  
դորներին կոպիտ ու արհամարհանքով պատաս-  
խանեցի. «Ես անուղեղ չեմ. իմ կյանքում տեղի  
ունեցող իրադարձություններն ու անպատասխան  
աղոթքներն ապացուցում են, որ Աստված չկա»:  
Որոշեցի, որ ինքս կդառնամ իմ կյանքի տերը  
և ապագաս կկառուցեմ՝ առանց ԲՈՒՀ ընդուն-  
վելու: Անկեղծ ասած՝ իմ մեջ վերացել էր ինչ-որ  
մեկին ինչ-որ բան ապացուցելու ցանկությունը:  
Ներաշխարհս այնքան հարուստ էր, այնքան գու-  
նեղ, այնքան հետաքրքրություններ ու երազանք-  
ներ ունեի, որ որոշեցի կենտրոնանալ կյանքս  
գեղեցիկ ու բովանդակալից դարձնելու վրա, ոչ  
թե ինչ-որ մեկին ինչ-որ բան ապացուցելու: Երբ  
կտրուկ մերժեցի Աստծո գոյությունը, իմ մեջ հար-  
ցեր առաջացան՝ եթե Աստված չկա, ինչո՞ւ եմ աղո-  
թելիս զգում, որ ինչ-որ մեկն ինձ ուղղորդում է,  
ինչո՞ւ եմ խոսում Սուրբ Հոգով՝ օտար լեզունե-  
րով... Այդ հարցերը լռեցնելու համար մտածեցի,  
որ կամաց-կամաց հոգեկան խանգարում եմ ստա-  
նում, բայց քանի դեռ լիովին չեմ խելագարվել և  
քանի դեռ ոչ ոք գլխի չի ընկել, թե ինչ վտանգի

առջև եմ կանգնած, շարունակեմ կյանքս վայելել՝ տրվելով իմ հետաքրքրություններին:

Արդեն 20 տարեկան էի, այլևս չէի աղոթում, Աստվածաշունչ չէի կարդում, համոզված էի, որ Աստված գոյություն չունի, և նույնիսկ մտածում էի. «Ինչ լավ է, որ Նա չկա, այսպես ավելի հեշտ է, քանի որ դժվարությունների հանդիպելիս այլևս չեմ վազում աղոթելու, իսկ հետո, աղոթքիս պատասխանը չստանալով, չեմ հիասթափվում»: Դժվարությունների հանդիպելիս հարցերը լուծում էի իմ ձևով (արդեն ասել եմ, որ շատ համարձակ էի և մեծ կամքի ուժ ունեի): Թեպետ չէի աղոթում և Աստծո գոյությունը մոլուցքով մերժում էի, բայց Տերն ինձ առաջնորդում էր կյանքիս բոլոր ճանապարհներում: Հաջողություններն ուղեկցում էին ինձ: Երազներ էի տեսնում, որոնք լիարժեք մարգարեություններ էին, պարզապես այդ ժամանակ չէի հասկանում, որ այդ ամենը Տերն էր անում:

Մի օր հարևանուհիս ասաց, որ Հայելեկտրագործարանում մեքենագրուհու թափուր աշխատատեղ կա: Նա ծանոթ էր գործարանի փոխտնօրեններից մեկի հետ և խորհուրդ տվեց, որ ես ու

ընկերուհիս դիմենք նրան՝ խոստանալով նախօրոք զանգել և իր ծանոթին տեղեկացնել մեր այցի մասին: Հարևանուհիս նաև ավելացրեց. «Գայանէ ջան, խնդրում եմ, հանկարծ չնեղվես, եթե քեզ աշխատանքի չընդունեն. ախր դու սիրուն չես, իսկ Աննան շատ սիրուն է, Աննային հաստատ կընդունեն»: Ես իմ կյանքում այնքան վիրավորանքներ էի ստացել, որ հարևանուհուս ասածն իմ մեջ ոչ մի արձագանք չառաջացրեց: Ինչևէ, հարևանուհիս մանրամասն բացատրեց, թե որտեղ է գտնվում այդ գործարանը, և ինչպես կարող ենք հասնել այնտեղ: Ընկերուհուս հետ, ինչպես մեզ թվաց, գնացինք աշխարհի ծայրը: Երբեք չէինք եղել Երևանի այդ հատվածում: Ես ապշած էի: Մի քանի օր առաջ երագումս տեսել էի այդ նույն՝ 32 համարի դեղին ավտոբուսը, որը, անցնելով երկար ու ձիգ ճանապարհով, ինձ հասցրել էր գործարանի տարածքը: Արթնանալով՝ ես կարևորություն չէի տվել երազիս, քանի որ երբեք մտքովս չէր անցնի, որ դա կարող էր այդքան նշանակալի ու մարգարեական լինել հետագա կյանքիս համար:

Մենք հանդիպեցինք փոխստնօրենի հետ: Կարճատև զրույցից հետո նա ինձ ասաց, որ հաջորդ օրվանից կարող եմ աշխատանքի անցնել հենց իր մոտ, իսկ գեղեցկուհի ընկերուհուս ներողություն հայցող ժպիտով ուղարկեց տուն: Ես ուղիղ մեկ տարի աշխատեցի հրաշալի կոլեկտիվում: Չափազանց կիրթ, բարեհամբույր մարդիկ էին: Ես սիրում էի ն՛ իմ աշխատանքը, ն՛ իմ ղեկավարին ու ամբողջ աշխատակազմին: Արդեն մայիս ամիսն էր: Մոտենում էր հունիսը: Կյանքս հրաշալի էր: Մեկ տարվա ընթացքում հասցրի իրականացնել երազանքներիս մի մասը, ստեղծագործել, ճանապարհորդել... Հանկարծ իմ մեջ բուռն ցանկություն առաջացավ՝ վերցնելու գրքերը և կրկնելու այն ամենը, ինչ պահանջվում էր համալսարանի ընդունելության քննությունների ժամանակ: Ես մտադրություն չունեի կրկին դիմելու, առավել ևս այն դեպքում, երբ գիտեի, որ գործարանի մեկ տարվա աշխատանքային ստաժն ընդունելության ժամանակ մասնագիտական չէր համարվելու: Սակայն անկարող լինելով դիմադրելու ներքին մղման ուժին՝ վերցրի

դասագրքերու և աչքի անցկացրի այն թեմաները, որոնք երկար ու ձիգ տարիներ անգիր էի արել: Երբ տանն էի, այնպես էի կարդում այդ գրքերը, որ ոչ ոք չտեսներ: Հարևաններս ու բարեկամներս անթաքույց ծաղրանքով հարցնում էին. «Հը, էլ չե՞ս ուզում փորձել, սովորելուց ձեռք քաշեցի՞ր»: Բոլորին ասում էի, որ այլևս չեմ դիմելու, անկեղծ ասած՝ հավատում էի իմ խոսքերին:

Եկավ հունիս ամիսը: Փաստաթղթերը համալսարան տանելու ժամանակն էր: Ըստ իս՝ ոչ մի հնարավորություն չունեի ընդունելության քննություններին մասնակցելու, բայց ներսիցս մի հզոր ուժ ինձ մղում էր անհրաժեշտ փաստաթղթերը պատրաստելու և հանձնելու: Ակամայից ենթարկվեցի այդ ուժին: Փաստաթղթերս սիրով ընդունեցին: Միայն քույրերիս ու աշխատանքային ընկերներիս տեղյակ պահեցի, որ կրկին դիմում եմ համալսարան՝ խնդրելով, որ ուրիշ ոչ ոք չիմանա: Նույնիսկ ծնողներս չգիտեին: Համալսարանում չորս քննություն հանձնեցի: Բոլոր քննություններին մասնակցում էի ակամա: Երբ օրը գալիս էր, գիտեի, որ ընդունելության քննության եմ, բայց

ոչ մի ցանկությունն չունեի համալսարան գնալու: Պարզապես, մի աներևույթ ուժ ինձ ուղղորդում էր այնտեղ: Ես ապշած էի, չէի կարող բացատրել, թե դա ինչ ուժ էր: Արդեն չէի մտածում խելագարված լինելու մասին, քանի որ աշխատավայրում ինձ հաճախ էին պատասխանատու գործեր հանձնարարում. մտածում էի, որ եթե նրանք ինձ վստահում են, ուրեմն կարող եմ վայելել կյանքը ու չմտածել հոգեկան խանգարման մասին: Բայցևայնպես, դա ինչ ուժ էր...

Հերթական քննությանը մասնակցելու համար բարձրանում էի իմ կյանքում անհասանելի երազ թվացող համալսարանի աստիճաններով և լսում, թե ինչպես էին շուրջս գտնվող դիմորդները բարձրաձայն աղոթում ու հաջողություն խնդրում Աստծուց: Կանգ առա և բարձրաձայն ասացի. «Տիեզերքը կառավարող Ո՛ւժ, Դու կա, ես Քեզ հավատում եմ և անվանում եմ Աստված, խնդրում եմ՝ օգնիր ինձ»: Աղոթելիս գիտակցում էի, որ դիմում եմ ՀԶՈՐ մեկին, ով սքանչելի ձևով կառավարում է տիեզերքը:

Հանձնելով բոլոր քննությունները՝ ես այդպես էլ չստացա «գերազանց» գնահատականներ,

որոնք կապահովեին իմ ընդունելությունը: Մրցույթը բարձր էր. մեկ տեղի համար ինը դիմորդ կար: Համեմատաբար բարձր գնահատական ստացած դիմորդները մյուսներին համոզում էին, որ մեր փաստաթղթերն արագ ետ վերցնենք և հանձնենք համեմատաբար ցածր մրցույթ ունեցող ԲՈՒՀ: Նրանք ապացուցում էին, որ դա լավ կլինի թե՛ մեզ համար, որովհետև համոզված կլինենք, որ ընդունված ենք, թե՛ իրենց համար, որովհետև մրցակցությունը կնվազի: Մենք շուրջ մեկուկես ամիս հանդիպում էինք համալսարանի բակում, և ես անվերջ այդ վախի հորդորներն էի լսում: Տարբեր փաստարկներ բերելով՝ նրանք ինձ համոզում էին, որ փաստաթղթերս ետ վերցնեմ: Հարևաններս, անտեղյակ լինելով, որ կրկին դիմել եմ համալսարան, ինձ մխիթարում էին. «Դե, առանց ծանոթի ո՞վ կարող է ընդունվել, այն էլ՝ բանասիրության բաժին, որտեղ մրցույթը բարձր է»: Ես ձայն չէի հանում: Լուռ սպասում էի:

Եկավ բաղձալի օրը: Իմ անունը գրված էր Երևանի պետական համալսարանի բանասիրության բաժին ընդունվածների ցուցակում: Ամիսներ

անց իմացա, որ Հայէլէկտրագործարանի տվյալ բաժնից ներկայացված իմ ստաժը մասնագիտական էր համարվում: Այդ ստաժը ներկայացնողները, անկախ վկայականի գնահատականներից, ընդունվում էին մրցույթից դուրս: Այդ աշխատատեղն ինձ Տերն էր պարզևել, քանի որ մինչև այստեղ գնալը, ես արդեն երազում տեսել էի ամբողջ ընթացքը, իսկ հարևանուհիս ինձ մխիթարում էր. «Գայանէ ջան, եթե քեզ չընդունեն, չնեղանաս. ախր դու սիրուն չես...»: Աստվածաշունչն ասում է. «... **եթե Աստված մեր կողմն է, ո՛վ է մեզ հակառակ**» (Հռոմ. 8.31):

Տիրոջ ձեռքը մշտապես եղել է իմ կյանքում, անկախ այն հանգամանքից՝ ես ընդունել եմ Նրա գոյությունը, թե՛ ոչ: Նա համբերատար ուղեկցել է ինձ կյանքիս բոլոր ճանապարհներում: Սակայն նույնիսկ այս դեպքերը՝ իմ մարգարեական երազը, աշխատանքի ընդունվելը, մասնագիտական ստաժ ձեռք բերելը, այնուհետև, ընդամենը մեկ ամիս գրքերը թերթելը, իմ երազած ֆակուլտետն ընդունվելը, ինձ համար ապացույց չէին, որ կա Սուրբ Երրորդություն՝ Հայր Աստված, Որդի Աստված, Սուրբ



Հոգի Աստված: Ես ուսանողուհի դարձա, և հաջողությունների հեղեղը կրկին թափվեց իմ գլխին: Միայն երեք տարի հետո հասկացա, որ հաջողություններն ինձ ուղեկցում են այն բանի շնորհիվ, որ լսում ու հետևում եմ Սուրբ Հոգու ձայնին. չէ՞ որ տասը տարեկանում մկրտվել էի Սուրբ Հոգով, և Նրա առաջնորդությունը միշտ ինձ հետ էր՝ չնայած նրան, որ դպրոցն ավարտելուց հետո, երեք տարի շարունակ համոզված էի, որ Աստված չկա:

Ինչպե՞ս էր հաջողությունն այցելում ինձ կամ ինչպե՞ս էի ես հայտնվում նրա գրկում. **լսում էի Նրան և ենթարկվում:** Այդ ժամանակ կարծում էի, թե շատ ուժեղ ինտուիցիա՝ կանխազգացում ունեմ, հետո համոզվեցի, որ ոչ մի մարդկային կանխազգացում չէր կարող ինձ բերել այնքան հաջողություններ, որքան պարզևեղ էր Սուրբ Հոգին:

Ինչո՞ւ գրեցի իմ դպրոցական տարիների որոշ դրվագների, նեղությունների, համալսարան ընդունվելու, վրեժի ու ներման ընտրության առջև կանգնելու մասին: Այս ամենը մի նպատակ ուներ. ես ցանկանում էի ցույց տալ՝ ո՞վ է մարդը, որ որոշի Աստծո մարդու կյանքի ընթացքը: Տերն ասում

է. **«Մի՛ վախեցիր, այլ միայն հավատա»:** Նա լսում է մեր բոլոր աղոթքները, աղաղակները, պարզապես Նա է որոշում՝ երբ և ինչպես պատասխանի, երբ և որտեղ ներկայանա Իր ամբողջ փառքով: Աստվածաշնչյան խոսքերն իրական են. **«Ինչ որ աչք չտեսավ և ականջ չստաց և մարդու սիրտ չընկավ, այն պատրաստեց Աստված Իրեն սիրողների համար»** (Ա Կորնթ. 2.9):

Հիմա ներկայացնեմ մեկ այլ վկայություն, թե ինչ է պատահում այն մարդուն, ով վախի հոգուն ասում է՝ ՈՉ, և Տիրոջ կանչին ասում՝ ԱՅՈ: Պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողուհի էի, երբ Տիրոջ հերթական ողորմությամբ ու հրաշքով աշխատանքի ընդունվեցի Մատենադարանում՝ Հնագույն ձեռագրերի ինստիտուտում: Երբ փոքր էինք, մայրս մեզ պատմում էր, որ պապիկս աշխատել է Մատենադարանում: Ինձ համար Մատենադարանը «կապույտ երազ» էր: Երբեմն կանգնում էի այդ շենքի դիմաց ու մտածում՝ ինչ կա ներսում, բացի Ձեռագրերի ցուցասրահից, որտեղ այցելուների մուտքն ազատ է, ուրիշ ինչ կա

այնտեղ: Մի անգամ մի երագ տեսա. շատ երկար սրահ էր: Ամբողջ սրահը գրավել էր մի երկար սեղան, որի շուրջ թիկնակով աթոռներ էին դրված: Այդ աթոռներին տարբեր տարիքի մարդիկ էին նստած, իսկ ես նստած էի մի աթոռի վրա, որը շատ բարձր էր մյուս բոլոր աթոռներից և թիկնակ չուներ: Այդ աթոռն առանձնացված էր, հեռու էր դրված սեղանից ու մյուս աթոռներից: Երագիցս ամիսներ անց ընդունվեցի Մատենադարան՝ աշխատելու համակարգիչների նորաբաց բաժնում: Այդ տարիներին համակարգիչը Հայաստանի համար փառահեղ ճոխություն էր (80-ական թվականների վերջն էր, մի քանի ամսից սկսվեցին Ղարաբաղյան դեպքերը, Խորհրդային կարգերի փլուզումը): Երբ ինձ ծանոթացնում էին Մատենադարանի ներսի սրահներին՝ ընթերցասրահներ, ձեռագրատուն..., հանկարծ հայտնվեցի այն սրահում, որը մի քանի ամիս առաջ երագում տեսել էի: Պարզվեց, որ դա Մատենադարանի սեղանատունն է (ընդամիջման ժամին աշխատակիցներն այդտեղ են ճաշում): Ես դեռ համոզված չէի, որ կա Սուրբ Երրորդություն՝ Հայր Աստված, Որդի

Աստված, Սուրբ Հոգի Աստված, դեռ մերժում էի Աստծո գոյությունը, քանի որ իմ մեջ դեռևս անպատասխան հարցեր կային: Սակայն ինչպէս բացատրեի իմ հերթական մարգարեական երազը: Ես ոչ մի հնարավորություն չունեի՝ աշխատանքի ընդունվելու Մատենադարանում, առավել ևս, գաղափար չունեի, որ այնտեղ այդպիսի սրահ կա: Իսկ ինչ էր նշանակում այն, որ ես նստած էի ամենաբարձր աթոռի վրա, որը թիկնակ չուներ: Ուշադիր զննեցի սենյակը, բայց այնտեղ ոչ մի նմանատիպ աթոռ չտեսա: Որոշեցի սպասել. արդեն համոզված էի, որ Մատենադարանը գերբնական նշանակություն է ունենալու իմ կյանքում:

Իսկապես, Մատենադարանում աշխատելու տարիները հետագայում մեծ նշանակություն ունեցան ինձ համար: Ինչպես նշեցի, համալսարանի 2-րդ կուրսի ուսանողուհի էի, երբ ընդունվեցի աշխատանքի: Մի օր մի հեռուստահաղորդում ինձ ստիպեց մտորել. «Եթե Աստված կա, և Աստվածաշունչը ճիշտ է, նշանակում է՝ կա հավիտենական կյանք, դժոխք և դրախտ... Իսկ ինչ է սպասվում ինձ այդ դեպքում»: Ես կարդացել էի Աստ-

վածաշունչը և գիտեի, որ բարի գործերը, բարոյական կյանքը, բարձր արժեքներով առաջնորդվելը մարդուն դրախտ չեն տանում: Հավիտենությունը դրախտում Աստծո հետ անցկացնելու համար պետք է ընդունես Հիսուս Քրիստոսին որպես կյանքիդ Տեր ու Փրկիչ: Ինձ համար ամենադժվարը դա էր: Ես արդեն կամքի ուժով, աշխատասիրությամբ շատ բարձունքներ էի հաղթահարել և, յուրաքանչյուր բարձունք հաղթահարելով, մտածում էի՝ ինչ լավ է, որ Աստված չկա: Չկա մեկը, որին պետք է ենթարկվել: Առանց Աստծո՝ աշխատասիրությամբ, մեծ կամքի ուժով, ես ավելի շուտ եմ հասնում հաջողությունների, քան աղոթքով ու աղերսանքով: Բայց այդ հեռուստահաղորդումն ինձ պարտադրեց աղոթել. «Աստված, եթե Դու կաս, Քո գոյությունն ապացուցի՛ր գիտականորեն»: Աստված հենց այդ նույն օրն ինձ ապացուցեց Իր գոյությունը, իսկ հետագա օրերի ընթացքում, շարունակելով գերբնական ձևով հայտնվել իմ կյանքում, հնարավորություն ստեղծեց Մատենադարանի ձեռագրատանը հայտնագործելու մի գիրք, որտեղ ապացուցվում էր, որ

տիեզերքը Ստեղծողը և Աստվածաշունչը գրողը մեկն է՝ ԱՍՏՎԱԾ: Ես այդ գիրքն արագ վերցրի ձեռագրատնից և սկսեցի համակարգչով հավաքել, քանի որ շենքից դուրս հանելու իրավունք չունեի: Գրքի համակարգչային օրինակը տվեցի քրոջս, որպեսզի ներկայացնի Վիկտոր Համբարձումյանին (նա ուներ այդ հնարավորությունը): Որքան մեծ էր իմ ցնցումը, երբ իմացա, որ շատերի կողմից ընդունված, սիրված, հարգված և միջազգային ճանաչում վայելած գիտնականը գիրքն ընթերցելուց հետո քրոջս ասել էր. «Ես գիտեի, որ Աստված կա, բայց չգիտեի, որ կա Հիսուս Քրիստոս, և Նա նույնպես Աստված է, ինչպես որ ասում է Աստվածաշունչը, իսկ այդ Գիրքն ամբողջությամբ ճշմարիտ է: Դու երջանիկ ես, որ դա հասկացել ես այսքան երիտասարդ տարիքում»: (Այդ գրքի համակարգչային տարբերակը կարող եք կարդալ իմ բլոգում՝ [gayanehakobyan.org](http://gayanehakobyan.org), «Սուրբ Գրքի բառային ներշնչումը գիտականորեն ապացուցված», Նոյեմբեր 18, 2015 թ.):

Համոզվելով, որ Աստված կա՝ ես ոչ միայն սկսեցի հաճախել եկեղեցի, այլև դարձա գթութ-

յան ծառայության ղեկավար. ծառայում էի աղ-  
քատներին, ծնողագուրկներին, հաշմանդամնե-  
րին: Շատ ակտիվ կյանք էի վարում՝ և՛ ուսանող  
էի, և՛ ներգրավված էի քաղաքական դաշտում  
(Պարույր Հայրիկյանի գլխավորությամբ լույս  
տեսնող թերթիկներն ու բրոշյուրներն էի տարա-  
ծում բոլոր հնարավոր վայրերում, որտեղ ոտք  
էի դնում), և՛ աշխատում էի Մատենադարանում,  
Գրողների միությունում ու Հեռուստառադիոպետ-  
կոմում: Շուտով պետք է ավարտեի համալսա-  
րանն ու ամբողջությամբ նվիրվեի գիտությանը:  
Արդեն համոզվել էի, որ այն բոլոր բարձունքնե-  
րը, հաջողությունները, որ տրվել էին ինձ՝ Աստ-  
ծո ողորմության, սիրո ու շնորհքի շնորհիվ էին,  
անկախ այն բանից, որ այդ ժամանակահատվա-  
ծում համառորեն մերժել էի Նրա գոյությունը: Բո-  
լոր իրավիճակները, պատկերները մոզաիկայի  
նման հավաքվել էին ու ապացուցել, որ Աստված  
ՍԵՐ է: Ինչպես նշեցի, հասարակական գործու-  
նեությունից ու Մատենադարանում աշխատելուց  
բացի, ես ղեկավարում էի «Գնացե՛ք, տեսե՛ք...»  
գրության ծառայությունը: Մտածում էի, որ երբ

ամբողջությամբ նվիրվեմ գիտությանը, ծառայության ղեկավարման պատասխանատվությունը կփոխանցեմ մեկ այլ անձնավորության: Գերագույն նվիրվածությամբ շարունակում էի այցելել եկեղեցի, բայց իմ ապագան տեսնում էի Մատենադարանում: Համալսարանն արդեն ավարտել էի, գիտական թեզ էի ընտրել Վարդան Արևելցու «Սաղմոսաց մեկնությունը»՝ մտածելով, որ այդ թեման Աստծուն հաճելի է, և ես գիտության բնագավառում կծառայեմ Իրեն: Բայց Աստվածաշնչում գրված է. **«Իմ խորհուրդները ձեր խորհուրդները չեն, և ձեր ճանապարհներն Իմ ճանապարհները չեն,- ասում է Տերը»** (Եսայի 55.8): Մի օր շատ հստակ լսեցի Տիրոջ ձայնը. «Ամեն ինչ թո՛ղ և ամբողջությամբ ծառայիր Ինձ»: Այդ խոսքերն ինձ ցնցեցին: Ես որոշակի դժվարությամբ կարող էի հրաժարվել այն բոլոր բնագավառներից, որտեղ մինչև այդ ներգրավված էի, բայց ոչ՝ Մատենադարանից: Սակայն Տիրոջ առաջարկն այնքան հստակ էր, որ ես լավ էի հասկանում, թե ինչ է նշանակում «ամեն ինչ»: Հնազանդվելով՝ աստիճանաբար հրաժարվեցի այն բոլոր բնագա-



վառներից, որտեղ մինչև այդ աշխատում էի կամ գերագույն հաճույքով գործունեություն ծավալում: Միայն Մատենադարանն էր, որ ոչ մի կերպ չէր հարմարվում Տիրոջ առաջարկած գոհասեղանին: Ես աղոթում էի և Աստծուն համոզում, որ Նա ինձ թույլ տար նվիրվել գիտությանը: Հիշեցնում էի, թե ինչպես եմ Իր իսկ հրաշագործ ձեռքով մասնագիտական ստաժ ստացել և ընդունվել բանասիրության ֆակուլտետ, ինչպես եմ հայտնվել Մատենադարանում, նույնիսկ հիշեցնում էի իմ մարգարեական երազը՝ առանց թիկնակի բարձր աթոռը: Սակայն մի օր՝ Տիրոջն այդ ամենը հիշեցնելիս, ես հիշեցի, որ այդ աթոռը սեղանից և մյուս աթոռներից հեռու էր դրված: Քանի որ դրա բացատրությունը չէի կարող տալ, շարունակեցի փաստարկներս, թե ինչու չեմ ուզում հրաժարվել իմ «կապույտ երազից»: Իհարկե, ինձ համար առաջին տեղում իմ մեծ փափագն էր՝ նվիրվել գիտական աշխարհին, գրքեր գրել, ուսուցանել..., բայց կային նաև այլ պատճառներ, որոնք ինձ համար երկրորդական էին: Տերը սիրտ և երիկամներ քննող է. Նա գիտեր Մատենադա-

րանից հրաժարվել չցանկանալու իմ բոլոր պատճառները: Բայցևայնպես, ես Նրան անկեղծորեն բացատրեցի նաև երկրորդական պատճառները: Մեր ընտանիքի համար մի ժամանակահատված էր, երբ երեխաները մեծացել էին, ուսանող էին դարձել, իսկ հայրս արդեն թոշակի էր անցել: Նախքան թոշակի անցնելը՝ նա միշտ հիանալի ձևով հոգացել էր մեր ֆինանսական և նյութական բոլոր կարիքների մասին: Մինչև այսօր էլ չեմ պատկերացնում, թե նա ինչպես էր կառավարում մեր ընտանեկան ֆինանսները, որ երբեք պարտք չէինք վերցնում, այս կամ այն ապրանքը գնելու և կոմունալ ծախսերը հոգալու խնդիր չէինք ունենում: Չեմ հիշում մի օր, երբ նա հորդորեր երեխաներից մեկին՝ խնայողաբար օգտագործել այս կամ այն իրը կամ էլեկտրաէներգիան: Մեր հարևանները, հիմնականում, տոպրակներով էին վերադառնում խանութից կամ շուկայից, իսկ հայրս մեզ բեռնատար ավտոմեքենայով էր սնունդ մատակարարում: Եվ դա անում էր ոչ թե այն պատճառով, որ մենք անհագ ուտողներ էինք, այլ՝ միշտ բաժին էր առանձնացնում հարևանները:

րին, բարեկամներին, ընկերներին: Նրա գրպանում միշտ գումար կար: Նույնիսկ մի անգամ մեր տան մոտ գտնվող հանրախանութում, որն այժմ «Տաշիր» է վերանվանվել, մի թանկարժեք մորթե վերարկու տեսա: Ընդամենը 19 տարեկան էի: Առանց մտածելու, որ վերարկուն բավականաչափ թանկ արժե, վաճառողուհուն խնդրեցի, որ այն մեկ ժամով մի կողմ դնի, մինչև վերադառնամ ու գնեմ: Արագ տուն եկա և հորիցս խնդրեցի անհրաժեշտ գումարը՝ առանց կասկածելու, որ նա գուցե այդքան մեծ գումար չունենար: Նա հանգիստ հաշվեց իր մոտ եղած փողերը, իմ ուզած գումարը տվեց ինձ, իսկ մնացածը դրեց գրպանը: Մարդիկ, տեսնելով իմ թանկարժեք վերարկուն, և՛ հիանում էին, և՛ զարմանում, թե ինձ որտեղից այդքան գումար: Տարիներ հետո հասկացա, որ ոչ բոլորն են իրենց թույլ տալիս թանկարժեք մուշտակներ գնել, նույնիսկ՝ մեծահասակները: Շատերը տարիներով գումար են հավաքում այդպիսի հաճույք վայելելու համար: Եվ ահա, եկել էր պահը, որ արդեն մե՞նք պետք է աշխատեինք, հոգայինք մեր անձնական ծախսերը,

վճարեինք կոմունալ վարձերը... Քույրերս ուսանողներ էին՝ երկուսը սովորում էին Ճարտարապետականում, իսկ մեկը՝ պետական բժշկական համալսարանի վճարովի համակարգում (նա մանկաբարձ-գինեկոլոգի մասնագիտությունն էր ընտրել, և նրանց ֆակուլտետում ուսման վարձը բավականին բարձր էր): Մյուս քույրս ու եղբայրս դպրոցական էին: Մեզ, առավել քան երբևէ, շատ գումար էր պետք: Քանի որ ես Մատենադարանում բարձր աշխատավարձ էի ստանում ամերիկացի հովանավորի շնորհիվ, հրաժարվել էի իմ նախկին աշխատանքներից, հետևաբար՝ հոնորարներից: Ինչպէս էինք ապրելու, եթե հրաժարվեի նաև այս աշխատանքից: Բացի դրանից, մեր բոլոր երեխաների և հորս փոխհարաբերությունների միջև լարվածություն էր առաջացել. հայրս, լինելով Հոգեգալստական եկեղեցուց, չէր պատկերացնում, որ իր բոլոր երեխաները կգնան մեկ այլ եկեղեցի... Չեմ ուզում նրա բռներով նկարագրել, թե նա ինչ էր մտածում մեր աստվածապաշտության մասին: Մայրս ներքուստ համակրում էր մեզ, բայց ոչինչ չէր կարող անել իրավիճակը փոխելու համար:

Գրեթե չորս ամիս էր անցել: Մի օր կրկին իմ հերթական ողբով Տիրոջն աղերսում էի, որ փոխի Իր որոշումը և ինձ թույլ տա շարունակել աշխատանքս Մատենադարանում: Այդ ամիսների ընթացքում Տերն ինձ հետ այլևս չէր խոսել, բայց այդ օրը խոսեց. «Ես քեզ չեմ պարտադրում»: Այդ նախադասության մեջ մի այնպիսի հնչերանգ կար, որ ցավ էր արտահայտում իմ հերթական լաց ու կոծի նկատմամբ, կարծես ասում էր. «Երանի՜ համաճայների և ամեն ինչ զոհեիր»:

Ոչինչ չէր կարող ինձ ետ պահել: Կշեռքի մի նժարին մեծ սերն էր առ Աստված, մյուսին՝ ֆինանսական լուրջ խնդիրները, հորս ցասումը, անորոշ ապագան: Աստծո նկատմամբ ունեցած սերս ոչնչացրեց ապագայի նկատմամբ ամեն վախ:

Ես աշխատանքից դուրս եկա, և քույրերով որոշեցինք դրա մասին ոչ ոքի ոչինչ չասել, հատկապես՝ ծնողներին: Հայաստանի համար դա այն ժամանակահատվածն էր, երբ Ղարաբաղյան պատերազմի պատճառով Բաքվից ու Ադրբեյջանի այլ տարածքներից եկած հայ փախստականներ

ըը փորձում էին ապաստան գտնել հայրենիքում: Հայաստանի քաղաքներից երկուսը և մի շարք գյուղեր հիմնահատակ ավերվել էին երկրաշարժից, և տուժածները նույնպես հանգրվան էին փնտրում մայրաքաղաքում: Երկրաշարժի զոհ էր դարձել շուրջ 20 000 մարդ: Օգնել էր պետք ոչ միայն փախստականներին, Ղարաբաղյան պատերազմում զոհվածների ընտանիքներին, երկրաշարժից տուժածներին, այլև սոցիալապես խիստ կարիքավոր ընտանիքներին, փողոցում մուրացկանություն անող երեխաներին: Հայաստանը գտնվում էր շրջափակման մեջ, համատարած գործազրկություն էր, մարդիկ օրվա ընթացքում ընդամենը 2 ժամ էին էլեկտրաէներգիա ստանում, հացի համար շուրջօրյա հերթեր էին գոյանում: Մարդիկ կտրում էին քաղաքի ծառերը՝ բնակարանները տաքացնելու և կերակուր պատրաստելու համար: Ես մեծ փորձության առջև էի կանգնել: Շատ-շատերն էին երազում աշխատանք ունենալու, կայուն աշխատավարձ ստանալու մասին, իսկ ես զոհել էի մի աշխատանք, որն ինձ փայլուն ապագա էր խոստանում և բարձր աշխա-

տավարձով ապահովում: Բացի դրանից, Մատենադարանն այն եզակի վայրերից էր, որտեղ 24 ժամ էլեկտրաէներգիա կար՝ սենյակներն ապահովված էին մշտական լույսով ու ջեռուցմամբ: Ես ոչ միայն չպետք է ասոսայի, որ գոհել եմ ինձ այդքան հարմարավետություն և ապահովություն պարգևող աշխատանքը, այլև պետք է մտածեի հետագա քայլերի մասին.

**ա. Ինչպե՞ս պետք է ամբողջությամբ նվիրվեի Աստծուն և ծառայեի «Գնացե՛ք, տեսե՛ք...» գրքության ծառայությունում, որն արտասահմանյան ոչ մի երկրից օգնություն չէր ստանում:**

Տերն իմ հովվին այդ ծառայության գործունեության վերաբերյալ տեսիլք էր տվել՝ մատնանշելով Մարկոսի 6. 34-44 խոսքերը, որոնց համաձայն՝ եկեղեցու յուրաքանչյուր անդամ պետք է գնար ու տեսներ, թե ինչ ունի, որ կարող է նվիրաբերել գրքության ծառայությանը՝ երկրաշարժից տուժածների, Աղրբեջանից փախածների, փողոցում մուրացկանություն անողների կարիքները

հոգալու համար: Նշեմ, որ եկեղեցու անդամները նույն շրջափակման մեջ գտնվող Հայաստանի քաղաքացիներն էին, ովքեր շուրջօրյա հերթեր էին կանգնում հացի համար և ապահովված չէին մշտական աշխատանքով: («Գնացե՛ք, տեսե՛ք...» գթության ծառայության հիմնադրման, տեսիլքի և գործունեության մասին կարող եք կարդալ [gayanehakobyan.org](http://gayanehakobyan.org)-ում, «Սոցիալական ծառայություն» բաժնում):

### **բ. Ինչպե՞ս պետք է լուծվեին մեր ընտանիքի սոցիալական խնդիրները:**

Մեր ընտանիքի սոցիալական խնդիրները լուծելու համար քույրերով համախմբվեցինք և որոշեցինք աղաղակել Աստծուն՝ մեզ այդ իրավիճակից դուրս բերելու և աշխատանքով ապահովելու համար: Չնայած շրջափակման և էլեկտրաէներգիայի բացակայության պատճառով աշխատանք գտնելը համարյա անհնարին էր, մենք հավատքով աղաղակեցինք հզոր Աստծուն՝ խնդրելով ոչ թե սովորական, այլ բարձր աշխատավարձով ապահովող աշխատանք: Մենք չէինք նայում



այն իրավիճակին, որ Հայաստանի բնակչության 80%-ը գործազուրկ էր: Մենք ճանաչում էինք մեր Աստծուն. եթե Նա ինձ առաջարկել էր՝ զոհել իմ նվիրական աշխատանքը և այն բարձր աշխատավարձը, որի շնորհիվ մինչև այդ լուծվում էին մեր ընտանիքի կենցաղային խնդիրները, նշանակում էր՝ Նա այլ ճանապարհներ ուներ ոչ միայն իմ, այլև մեր ընտանիքի մյուս անդամների համար:

Կարճ ժամանակ անց քույրերս, ուսմանը զուգահեռ, աշխատանքի անցան բարձր աշխատավարձով ապահովող հաստատություններում:

Ինչ վերաբերում է Տիրոջ գործին ամբողջությամբ նվիրվելուն և «Գնացե՛ք, տեսե՛ք...» գրության ծառայությունը ղեկավարելուն, ծառայության անցնելու առաջին իսկ օրը ծնկի իջա Տիրոջ առջև ու աղոթեցի, որ Նա հնարավորություններ ստեղծի իմ մասնագիտական կրթության համար: Ես ամբողջությամբ վստահում էի Սուրբ Հոգու առաջնորդությանը, բայց գիտեի, որ Տիրոջ կամքն է՝ կրթել յուրաքանչյուրին իր կոչման համաձայն: Աղոթելիս նույնիսկ չէի մտածում, թե Տերն ինչ ճանապարհներ էր պատրաստել ինձ

կրթելու համար: Նա հնարավորություն ստեղծեց, որ «Սոցիալական ծառայության կառավարում» ուսանեմ Անգլիայում ու Ֆրանսիայում: Նույնիսկ Շվեյցարիայում՝ Ժնևում հնարավորություն ունեցա ծանոթանալու Կարմիր խաչի ու ՄԱԿ-ի կառավարման կազմակերպմանը: Երբ ՄԱԿ-ի շենք մտնելու համար սպասում էինք մեր խումբն առաջնորդողին, նա եկավ և առաջին նախադասությունը, որ ասաց, հետևյալն էր. «Ծիտն իր թևով այստեղ չի մտնում»: Թեպետ այդ շենք մտնելու հնարավորություն ունեին միայն բարձրաստիճան պաշտոնյաները, բայց Տերը մեզ՝ ուսանողներիս, շնորհ արեց: Հետագայում թե՛ ՄԱԿ-ում, թե՛ Կարմիր խաչում ստացած տեղեկություններն ու գիտելիքներն ինձ օգնեցին կառավարման գործը ճիշտ կազմակերպելու հարցում: Ծառայության բարեհաջող ընթացքի գրավականներից մեկը կառավարման ճիշտ կազմակերպումն է:

Տերը, ինչպես ծառայության ամբողջ ընթացքում, այնպես էլ հիմա, յուրաքանչյուր ծրագրի իրականացման համար տեսիլք է տալիս: Ծա-

ռայությունը ծրագրերն իրականացնում է՝ համաձայն տեսիլքի: Եվ յուրաքանչյուր տեսիլքի իրականացում պահանջում է՝ «ոչ» ասել վախի հոգուն և, նայելով Տիրոջը, «քայլել ջրի վրայով»: Իմ բլոգում՝ «Սոցիալական ծառայություն» բաժնում, համառոտ ներկայացնում եմ այդ ծրագրերից յուրաքանչյուրի համար ստացած տեսիլքը, դրա իրականացումը, Տիրոջ առաջնորդությամբ հրաշքների միջով մեր անցած ընթացքը: Այսօր, երբ ետ եմ նայում, մտածում եմ՝ ի՞նչ կլինեք, եթե հանկարծ տրվեի վախի հոգուն ու չզոհեի ինձ համար «կապույտ երագ» հանդիսացող Մատենադարանի աշխատանքը: Ես, հավանաբար, կխարխափեի անհաջողությունների օվկիանոսում և չէի էլ հասկանա, որ այդ անհաջողությունների պատճառն իմ կոչման մեջ չլինելն է: Մտնելով իմ կոչման մեջ՝ ես հնարավորություն ունեցա մասնակից լինելու հազարավոր բռնության ենթարկված երեխաների ու կանանց երջանկության վերականգնմանը, անտուն-թափառականների կյանքի անդառնալի թվացող ընթացքն Աստծո աջակցությամբ փոխելու իրականությանը, անկողնային

հիվանդներին ու սահմանափակ կարողություն ունեցող մարդկանց օգնության կազմակերպման կառավարմանը, հազարավոր խիստ կարիքավոր մարդկանց աղքատության փոշուց բարձրանալուն, տաղանդավոր, բայց սոցիալապես անապահով երեխաների համար կրթության հնարավորություն ստեղծելուն...

Իմ կյանքում շատ դեպքեր են եղել, երբ ընտրության առջև եմ կանգնել: Հիմա չեմ ցանկանում անդրադառնալ այդ դեպքերին և ոչ էլ այն հարցերին, թե ինչպես ծնողներս իմացան իմ աշխատանքից դուրս գալու մասին, կամ թե ինչպես հայրս՝ մեզ սաստիկ հալածողից դարձավ Աստծո գործերում մեզ ոգեշնչողներից մեկը և առայսօր, 82 տարեկան հասակում, շարունակում է մեզ հետ տարածել Աստծո Խոսքը:


Տերը՝ տիեզերքի Արարիչը, առավել քան հավատարիմ է: Նա Իրեն սիրողներին այնպես է պատվում, որ վեր է հասարակ մահկանացուի երազանքներից ու պատկերացումներից: Ես չեմ հոգնի կրկնելուց. **«Ինչ որ աչք չտեսավ և ականջ չստաց և մարդու սիրտ չընկավ, այն պատրաստեց Աստված**

Իրեն սիրողների համար» (Ա Կորնթ. 2.9): «Բոլոր քո դեմ շինած գործիքները չպիտի հաջողվեն, և ամեն լեզու, որ վեր կենա քո դեմ դատաստանի, պիտի դատապարտվի. սա է Տիրոջ ծառաների ժառանգությունը, և նրանց արդարությունն Ինձնից է, - **ասում է Տերը**» (Եսայի 54.17):

Սոցիալական ոլորտում 23 տարի Տիրոջը ծառայելով՝ մի օր աղոթեցի. «Տեր, միթե իմ կյանքն ամբողջությամբ Քեզ եմ նվիրել, որ ծառայեմ միայն սոցիալական ոլորտում: Ես երախտապարտ եմ, որ բացեցիր աչքերս և հնարավորություն ստեղծեցիր՝ մտնելու այն կոչման մեջ, որ նախապատրաստել էիր ինձ համար, երբ դեռ ոսկորներս ձևավորվում էին մորս որովայնում կամ՝ ավելի վաղ: ԻՆՆ՞րո՞ւմ եմ, հնարավորություն տուր ինձ՝ ավելի՞ն անելու. Դու գիտես, որ իմ մեջ կա այդ ներուժը»: Ամիսներ անց Տերը գերբնական ձևով բացեց իմ հաջորդ ծառայության դարպասները: Նա խոսեց ինձ հետ անձնական բլոգ ստեղծելու և գրքեր գրելու մասին: Անկեղծ ասած՝ ես այնքան էի խորասուզվել սոցիալական աշխատանքի մեջ (երբեմնի «Գնացե՛ք, տեսե՛ք...»

գթության ծառայությունն աճել էր որպես առողջ օրգանիզմ և վերածվել Սոցիալական ծառայությունների կենտրոնի), որ մոռացել էի իմ առաջին մասնագիտության մասին: Ես հիշեցի, թե ինչպես Տիրոջ ողորմությամբ ու առաջնորդությամբ ընդունվեցի պետական համալսարանի բանասիրության բաժինը, ինչպիսի փորձառություն ձեռք բերեցի Հեռուստառադիոպետկոմում և Մատենադարանում: Հասկացա, թե ինչ էր նշանակում իմ երազը, երբ ինձ տեսել էի Մատենադարանի սեղանատանը՝ բարձր ու առանց թիկնակի աթոռին նստած... Իմ աթոռն առանձնացված էր և բարձր էր մյուս աթոռներից, որովհետև Տիրոջ առաջնորդությամբ պետք է տեղափոխվեի իմ երազած գիտական աշխատանքից ավելի բարձր ոլորտ՝ Աստծո ծառայության ոլորտը, իսկ Աստծուն ծառայել՝ նշանակում է ծառայել անօգնականներին, որբերին, զրկվածներին: Իմ աթոռը թիկունք չունեի, որովհետև իմ թիկունքը, առաջնորդը և հենարանը Հիսուս Փրկիչն էր: Սուրբ Հոգու առաջնորդությամբ, գթության ծառայության մեջ իմ կոչմանը հավատարիմ մնալով՝ ես մտա նոր ոլորտ,

որպեսզի գրքերի, ուսմունքների, բլոգի միջոցով  
օգնեմ մարդկանց՝ փոխելու իրենց կյանքերը՝  
համաձայն Աստծո կամքի, որն է **«բարին, հաճե-  
լին և կատարյալը»** (Հռոմ. 12.2): Այս նոր կոչումը  
դարձյալ կապված էր վախի հոգուն ՈՉ ասելու  
հետ: Ընդհանրապես, մեր կյանքը լի է նոր իրա-  
դարձություններով և մարտահրավերներով: Յու-  
րաքանչյուրս անհրաժեշտություն պիտի զգանք,  
որ ամեն օր ընդունելով այդ մարտահրավերնե-  
րը, Սուրբ Հոգու զորությամբ «ոչ» ասելով վախի  
հոգուն և իրականացնելով մեզ համար Աստծո  
երազանքներն ու անուրջները՝ ոչ միայն փոխենք  
մեր կյանքը, այլև մասնակից լինենք մեր կյան-  
քում Աստծո արքայության հաստատմանը: Աստծո  
արքայությունն ուտելիք և խմելիք չէ, այլ **«արդա-  
րություն և խաղաղություն և ուրախություն Սուրբ  
Հոգով»** (Հռոմ. 14.17): Երբ մարդու կյանքում հաս-  
տատված է Աստծո արքայությունը, նա ոչնչից չի  
վախենա:



## «Աղքատությունը մտածելակերպ է, թե՛ սոցիալական վիճակ»

Գայանե Հակոբյանն այս գրքում խոսում է այն վերաբերմունքի մասին, որն ունի Աստված մարդու ֆինանսական օրհնության բնագավառի վերաբերյալ, և ցույց է տալիս

օրհնության այդ բնագավառ մտնելու աստվածաշնչյան բանալիները:



## «Ուլքեր են լսում Տիրոջ ձայնը»

Յուրաքանչյուր վերստին ծնունդ ստացած քրիստոնյա պետք է ունենա գիտություն՝ տարբերելու Աստծո ձայնը թե՛ սատանայի ձայնից, թե՛ իր իսկ մարմնի ու շնչի ցանկության թելադրանքից:

Այս գիրքը կօգնի ընթերցողին՝

լսել և տարբերել Աստծո ձայնը և հասկանալ, թե ինչպես է Նա խոսում:





ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

Գրքում ներկայացվում է վախ երևույթը, նրա ծնունդը, զարգացման պատճառը և նրանից ազատվելու ճանապարհը՝ համաձայն Աստվածաշնչի:  
Հեղինակն անդրադառնում է այնպիսի հարցերի, որոնց, շատ հաճախ, մարդիկ բախվում են:

Գայանե Հակոբյանի և նրա ծառայության մասին ավելին իմանալու համար այցելեք՝ [gayanehakobyan.org](http://gayanehakobyan.org)



Gayane Hakobyan

ISBN 978-9939-1-0391-4



9 789939 103914 >